19 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2012 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 227(5079)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651
9 771829 165003 12227

## Դանիական մամուլում տպագրվել է թուրք գիտնականների նամակ-բողոքը՝ Թուրքիայի ժխտողական քաղաքականության դեմ

Մի քանի տասնյակ թուրք գիտնականներ բողոքել են Դանիայի թագավորական գրադարանի տնօրենության դեմ, որը թույլ էր տվել Թուրքիայից Հայոց ցեղասպանության ժխտողական տեսակետը ներկայացնել ցուցադրության տեսքով՝ «այսպես կոչված Հայոց ցեղասպանությունը» խորագրով: Այս մասին «Արմենպրեսի» հետ զրույցում նշեց ՀՀ ԳԱ ակադեմիայի Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն **Հայկ Դեմոյանը**: Մտավորականների բողոք-նամակը դեկտեմբերի 17-ին տպագրվել է դանիական մամուլում: «Նոյեմբերի սկզբներին մենք Դանիայում մեր դեսպանատան աջակցությամբ Դանիայի թագավորական գրադարանում բացեցինք ժամանակավոր ցուցադրություն, որի բացումը առաջ էր բերել թուրքական դեսպանության բացասական արձագանքը: Նրանք ամեն ինչ արել էին, որ ցուցադրությունը տեղի չունենա, սակայն, այնուամենայնիվ այն բացվեց նոյեմբերի 6-ին: Դանիական թանգարանը, սակայն, որոշում էր ընդունել որպես այլընտրանքային տարբերակ, թուրքական կողմին մի ցուցադրություն ունենալու հնարավորություն տալ»,- ասաց Դեմոյանը:

Նրա խոսքով՝ սա դանիական հասարակության շրջանում հուժկու բողոք էր առաջացրել: «Մեր դեսպանատան տրամադրած տվյալներով՝ շուրջ հարյուրից ավելի հրապարակում եղավ, որոնց մեծ մասը քննադատական բնույթի էր եւ դատապարտում էր թուրքական կողմին Հայոց ցեղասպանության թեմայի շուրջ ժխտողական տեսակետ ներկայացնելու համար: Թուրքական ժխտողականությանը վերջին խոշոր հակահարվածը հասցրին հենց թուրք գիտնականները: Դանիական մամուլում հրապարակվեց մի քանի տասնյակ թուրք գիտնականների նամակ- բողոքը՝ ուղղված գրադարանի տնօրենությանը, որը որոշել էր թուրքական ժխտողական տեսակետը ներկայացնել ցուցադրության տեսքով՝ ի հակադրումն հայկական ցուցադրության»,-հայտնեց Դեմոյանը՝ հավելելով, որ նրանց թվում Թաներ Ակչամն ու շատ այլ հայտնի գիտնականներ են:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենի խոսքով՝ հիմնական բողոքն այն է, որ թուրքական պետությունը, փաստորեն, «վերահսկում է հիշողությունը»: Դա խոսում է այն մասին, որ այդ երկիրը չի աջակցում դեմոկրատական արժեքներին, իսկ Հայոց ցեղասպանության ժխտողականությունը լավագույն ապացույցն է, թե ինչպես են թուրքերը բռնաճնշումներ իրականացնում այդ հիշողության նկատմամբ:

## Տրանսպորտը Երեւանում անտերության էր մատնված

*Երթուղիների սպասարկման մրցույթները շահած ընկերությունները պատրաստ չեն ձմռանը*




ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Մինչ ձյան գալը Երեւանի քաղաքապետարանի պաշտոնյաները հավաստիացնում էին, որ պատրաստ են դրան, ունեն աղի, ավազի պաշարներ, տեխնիկա եւ այլն: Թե ինչպե՞ս մաքրվեցին փողոցները եւ մայթերը ձյունից, թողնում ենք յուրաքանչյուր երեւանցու եզրակացությանը, անկախ այն բանից, որ երեկ տարածած հաղորդագրության մեջ քաղաքապետարանը հավաստիացնում էր, որ ձնամաքրման աշխատանքները ընթացքի մեջ են: Ամեն դեպքում, եթե այս առումով, լավ թե վատ, ինչ-որ աշխատանքներ կատարվեցին, ապա նույնը չի կարելի ասել երեկվա եւ նախորդ օրվա հասարակական տրանսպորտի վիճակի մասին: Այստեղ պարզապես խայտառակ անտերություն էր:

Ձյուն գալու առաջին օրն արդեն կանգառներում սկսվեցին ավելանալ կուտակումները: Թե առավոտյան, թե երեկոյան ժամերին, ինչպես միկրոավտոբուսները, այնպես էլ ավտոբուսները սկսեցին ավելի հազվադեպ ու գերբեռնված երեւալ: Տես էջ 2

## Օսկանյանն ու Զուրաբյանը դիմել են դատախազություն

ՀԱԿ խմբակցության ղեկավար Լեւոն Զուրաբյանն ու ԲՀԿ պատգամավոր Վարդան Օսկանյանը պաշտոնական գրությամբ դիմել են գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին՝ պահանջելով «Ռիչ» սրճարանում իրենց առանձնազրույցի պատճենի գաղտնալսման, ձայնագրման եւ համացանցում տեղադրման փաստով քրեական գործ հարուցել:

Ս. Խ.

## Սպասվում է ձյուն, բուք եւ մերկասառույց

Արտակարգ իրավիճակների նախարարությունից տեղեկանում ենք, որ դեկտեմբերի 19-20-ին հանրապետության շրջանների զգալի մասում, ամսի 21-ին հանրապետության ողջ տարածքում, իսկ ամսի 22-23-ին արեւմտյան շրջաններում սպասվում են տեղումներ ձյան տեսքով: Հանրապետության ճանապարհներին սպասվում է մերկասառույց, լեռնային շրջաններում ու լեռնանցքներում կլինի բուք, իսկ առանձին հատվածներում՝ մառախուղ: Դեկտեմբերի 19-21-ին օդի ջերմաստիճանը կբարձրանա 5-6, իսկ արեւելյան շրջաններում՝ 6-8 աստիճանով:

Իսկ Երեւանում դեկտեմբերի 19-21-ին ժամանակ առ ժամանակ սպասվում են տեղումներ անձրեւի ու թաց ձյան տեսքով: Ամսի 22-23-ին տեղումների հավանականությունը թեեւ կփոքրանա, սակայն կդիտվի ամպամածություն, քամու ուժգնացում 13-18 մ/վրկ, իսկ գիշերվա ժամերին եւ առավոտյան հնարավոր է, որ լինի մառախուղ:



Ի. Պ.

## «Մասաղիսի» դատապարտվածները արդարացվեցին, բայց գործը չփակվեց

«Մասաղիսի» հայտնի գործով դատապարտված 3 երիտասարդները՝ Ռազմիկ Սարգսյանը, Արայիկ Զալյանը եւ Մուսա Սերոբյանը երեկ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավճռով արդարացվեցին: Նրանք համապատասխանաբար դատապարտվել էին 7 եւ 8-ական տարվա կալանքի՝ իրենց զինակից ընկերներին՝ Ռոման Եղիազարյանին եւ Հովսեփ Մկրտումյանին ծեծի միջոցով սպանելու մեղադրանքով: Պաշտպանական խումբը դատարանում ապացուցել է, որ մեղադրանքի հիմքում եղել է միայն մեկ «ապացույց»՝ Ռազմիկ Սարգսյանի ինքնախոստովանական ցուցմունքը, որը կորզվել է խոշտանգումների միջոցով:

Այնուամենայնիվ, դատավոր Հարություն Մովսիսյանի նախագահությամբ դատարանը որոշել է գործն ուղարկել նոր քննության եւ հայտնաբերել իրական մեղավորներին:

Հիշեցնենք, որ 2003-ին Մասաղիսի զորամասում պատահած սպանության գործը գտնվել է նախկին զինդատախազ Գագիկ Ջհանգիրյանի հսկողության ներքո:

## Ալեն Դելոն. «Զգիտեի, որ Երեւանում ինձ այսքան սիրում ու գնահատում են»

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Շատ դժվար է լինել Ալեն Դելոն: Հատկապես դժվար է լինել Ալեն Դելոն ամեն օր, ողջ կյանքի ընթացքում: Դա հասկանալու համար գոնե մեկ օր պետք է ապրել իմ կյանքով, բայց պետք է խոստովանեմ, որ այդ կյանքը միաժամանակ հրաշալի է: Ես ուշադրություն եմ դարձնում միայն այն նախագծերին, որոնք ինձ կարող են թույլ տալ հասնել բարձունքների: Ես նրանցից չեմ, որ պարտվում են», մի առիթով ասել է աշխարհահռչակ ֆրանսիացի դերասան **Ալեն Դելոնը**:

Աշխարհի ամենահամակրելի ու գեղեցիկ տղամարդկանցից մեկը, որ մի քանի սերունդների կուռքն է, հանդիսատեսին ներկայացել է տասնյակ ֆիլմերում, ամենատարբեր դերերով՝ մարտնչող Զորրոյից մինչեւ որսակեր ֆրանսիացի, նախկին բանտարկյալ Ջինոյից մինչեւ Հուլիոս Կեսար:




Իր արտաքինի մասին Դելոնը հաճախ չի խոսել, նախընտրել է, որ իրեն գնահատեն իր վարպետության, այլ ոչ թե հմայիչ աչքերի համար:

Ժամանակի ընթացքում կինոքննադատները հասկացան՝ Դելոնը նույնքան տաղանդավոր է, որքան հմայիչ: 1973-ին էկրան բարձրացած «Երկուսը քաղաքում» ֆիլմում Ջինո Սթաբլիջի կերտած կերպարով նա ապացուցեց, որ դարաշրջանը լիովին կարող է համարվել դելոնական:

Նրան սիրահարված էին գրեթե բոլորը, սակայն նա խոստովանում է, որ այդպես էլ չի գտել իր կյանքի կեսին, այն երկրորդին՝ ում համար սիրտն ավելի արագ կբաբախեր, ում համար կցանկանար ապրել ու ստեղծագործել: Ֆրանսիայում ասում են՝ աստվածները կիսատ չեն լինում, նրանք ամբողջական են եւ լրացման կարիք չեն զգում: Հենց այսպես են ֆրանսիացիները բացատրում Դելոնի այն արտահայտությունը, թե այդպես էլ չգտավ իր կյանքի երկրորդ կեսին ու միշտ սիրո կարիք է զգում:

«Ես համակերպվեցի իմ արտաքինի հետ միայն այն ժամանակ, երբ էկրան բարձրացավ իմ ամենահայտնի ֆիլմերից «Լողավազանը»: Այդ ժամանակ ես երեսուներեք տարեկան էի ու հանկարծ հասկացա՝ Քրիստոսի տարիքը, սամուրայի հոգին, սիրեկան հերոսի արտաքինը, այս ամենը հակազդում են միմյանց եւ միաժամանակ դրանք իմ դերասանական հաղթաթուղթն են», մի առիթով նշել է դերասանը՝ հավելելով, որ իր անունը ոսկե տառերով է գրված կինոյի պատմության մեջ: Տես էջ 3

# Էթիկայի հանձնաժողովի ձեւավորման փոփոխությունն առաջին ընթերցում անցավ




Երեկ Ազգային ժողովը 66 կողմ, 28 դեմ եւ 1 ձեռնպահ ձայներով առաջին ընթերցմամբ ընդունեց ԱԺ կանոնակարգի այն փոփոխությունները, որով մեծամասնության նախաձեռնությամբ փոխվում է էթիկայի հանձնաժողով կազմելու եղանակը, հնարավորություն տալով մեծամասնությունից եւս երկու անդամի ընդգրկել այդ հանձնաժողովում, հավասարկշիռ կազմելու հիմնավորմամբ: ԲՀԿ-ի ոչ իշխանական դառնալը հանձնաժողովի անդամների կազմը դարձրել էր ընդդիմադիրների գերակշռությամբ (3-3 վիճակը փոխվել էր 4-2-ի), որը հավանաբար վախեցնում է մեծամասնությանը: ԲՀԿ-ն հայտարարեց, որ դեմ է քվեարկում, սակայն Ազգային ժողովի նախագահի մոտ քննարկումներ էին եղել երեկ մինչեւ նիստը, ու ըստ ԲՀԿ-ական Ստեփան Մարգարյանի՝ համաձայնության եզրեր ուրվագծվում էին: Եթե այդ համաձայնությունը կայանա, երկրորդ ընթերցման ժամանակ ԲՀԿ-ն կփոխի դիրքորոշումը:

ՀՅԴ-ն դեմ է փոփոխությանը՝ համարելով, որ այդպես հանձնաժողովը հեղինակազրկվում է: Չնայած՝ ՀՅԴ-ից Արմեն Ռուստամյանն ասում էր (լրագրողների հետ զրույցում), որ հանձնաժողովի նախագահ Նիկոլ Փաշինյանը նախորդ, դեկտեմբերի 7-ին հանձնաժողովի նիստին հանձնաժողովի անդամ Դավիթ Հարությունյանին նիստից դուրս հրավիրելու իրավունք չուներ, չնայած վերջինս արհեստական սկանդալով փորձել է խանգարել հանձնաժողովի նիստը: Երկուսով էլ սխալ են եղել մի խոսքով՝ ըստ Ռուստամյանի. այդ օրը քննարկվում էր ընդդիմության նախաձեռնած արտահերթ նիստը մեծամասնության կողմից տապալելու հարցի էթիկական կողմը: ՀՅԴ-ն առաջարկում է ապաքաղաքականացնել հանձնաժողովի ձեւավորման գործընթացը՝ հանելով կազմավորման ելակետ «ընդդիմություն եւ ոչ ընդդիմություն» բառերը եւ ներմուծելով «ԱԺ-ում ներկայացված ուժերից մեկական ներկայացուցիչ» ելակետը:

Երեկ մինչեւ նիստը Ազգային ժողովի նախագահի մոտ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ ինչ-որ համաձայնության եզրեր են ուրվագծվել, որոնց մասին պարզ կլինի հատուկ ընթացակարգով քննարկվող օրինագծի՝ երկրորդ ընթերցմամբ քննարկման ժամանակ, որն ի դեպ երեկ սկսվեց ու այսօր կշարունակվի:

Երեկ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, թե եթե այս տեսքով նախագիծն ընդունվի եւ օրենք դառնա, ինքը կհրաժարվի էթիկայի հանձնաժողովի նախագահի պաշտոնից: Աղվան Վարդանյան էլ ասում էր, որ այս տեսքով էթիկայի հանձնաժողովը քառակուսի անիվ է լինելու: ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանն իր ելույթում դիմեց ընդդիմությանը, թե՝ «Պետք չի «հաթաթա տալ», թե չենք մասնակցելու հանձնաժողովի աշխատանքին, մտքներիցդ հանեք նման բանը», ասաց՝ հավելելով, թե ի՞նչ է նշանակում 70 պատգամավորի խայտառակ անել, թե էթիկայի կանոն են խախտել:

Այսօր քննարկումը կշարունակվի Գ. Սահակյանի ընդհատված ելույթով:

Մ. Խ.

# Տրանսպորտը Երեւանում անտերության էր մատնված

1-ին էջից

Տրանսպորտի դեֆիցիտն այնքան մեծ էր, որ տեղացող ձյան տակ անհուսորեն սպասողների համար դժվար էր անգամ ազատ տաքսի գտնելը: Այդ նույն օրը քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետը (Հենրիկ Նավասարդյանը) զեկուցում է քաղաքապետ Տարոն Մարգարյանին, որ շարունակվել է ամենօրյա հսկողությունը հասարակական ավտոտրանսպորտային միջոցների շահագործման նկատմամբ եւ հատկապես ուշադրություն է դարձվել առավոտյան եւ երեկոյան ժամերին հաստատված չվացուցակների խախտման դեպքերին: Առնվազն տարօրինակ է թվում, թե ինչպե՞ս է կատարվել այդ հսկողությունը եւ ի՞նչ արդյունքներ է տվել ուշադրությունը չվացուցակների խախտման դեպքերին, երբ քաղաքապետարանի պատերից դուրս այդ ամենն աննկատ էր: Այնուամենայնիվ, մնում էր հուսալ, որ գուցե հաջորդ օրը ինչ-որ դրական փոփոխություն լիներ: Հաջորդ օրը, այսինքն երեկ, իրոք, որ փոփոխություն եղավ, բայց ոչ դրական:

Վաղ առավոտից կուտակումները կանգառներում ոչ միայն չէին նվազել, այլեւ ավելացել էին, ինչին զուգահեռ՝ շահագործվող ավտոբուսներն ու միկրոավտոբուսներն էլ նվազել էին: Հատկապես միջնականգառներում, երթեւեկող միկրոավտոբուսներից շատերը պարզապես չէին կանգնում, քանի որ գերհագեցած էին ուղեւորներով, իսկ կանգնողներն էլ անմիջապես գրոհի էին ենթարկվում այնտեղ մտնելու նպատակ ունեցողների կողմից: Բնականաբար, քչերին էր դա հաջողվում: Նույնն էր տեղի ունենում նաեւ երեւացող ավտոբուսների դեպքում: Մի խոսքով՝ տրանսպորտի վարչության պետի «ուշադրությունը» չվացուցակները խախտողների նկատմամբ առանձնապես չէր երեւում:

Կցանկանայինք այստեղ հիշեցնել, որ Հենրիկ Նավասարդյանը տրանսպորտի վիճակի բարելավման նախապայման էր համարում սակագնի բարձրացումն ու 200 դրամ դարձնելը: Հիմա, եթե սակագինը լիներ 200 դրամ, երեկ եւ նախորդ օրը տրանսպորտը նորմալ կաշխատե՞ր եւ կբավարարե՞ր մարդկանց: Ոչ իհարկե: Ընդամենը սակագինը փոխված կլիներ, եւ մարդիկ 100 դրամի փոխարեն 200 դրամ պետք է վճարեին, քանի որ մինչեւ սակագնին անդրադառնալը հարկ է նախ ապահովել անհրաժեշտ քանակի շարժակազմով:

Մինչ սակագնի մասին խոսելը հիշեցնենք, որ երթուղիների մրցույթները նոր են ավարտվել, եւ շահած կազմակերպությունները պետք է պատրաստ լինեին նաեւ ձմռան խնդիրներին: Ինչպես տեսնում ենք, այդպես չէ՝ միկրոավտոբուսներից շատերը ձյան պատճառով դուրս չեկան երթուղիներ: Այդ դեպքում հարց է առաջանում, թե ինչո՞ւ քաղաքապետարանը եւ «Երեւանտրանս» պետական ընկերությունը պատժամիջոցներ չեն կիրառում նրանց նկատմամբ: Այսինքն, հերթական անգամ պետք է փաստել այս կառույցների անգործությունն ու ավելորդությունը:

Հարկ է արձանագրել նաեւ, որ տրանսպորտային սպասարկման այս համակարգն իրեն չի արդարացնում: Քաղաքացիները արդարացիորեն բողոքում են տրանսպորտի անմխիթար վիճակից, երթուղիները սպասարկողները՝ սակագնից, իսկ քաղաքապետարանը ոչինչ չի կարողանում անել հավերժ թվացող այս իրավիճակը շտկելու ուղղությամբ: Գուցե ժամանակն է լրջորեն քննարկելու երթուղիների սպասարկումը մասնավորից վերցնելու եւ քաղաքային իշխանություններին վերապահելու հարցը, երբ պատասխանատվությունն ավելի որոշակի կլինի եւ սակագնի ու տրանսպորտային ծախսի տարբերությունն էլ կհոգա քաղաքային բյուջեն: Նման առաջարկ արել է օրենսդրության կարգավորման կենտրոնը, եւ մնում է սպասել, թե ինչ հետագա զարգացումներ կունենա: Իսկ մինչ այդ շատ պետք կանգառ՝ համալրելու տեղացող ձյան տակ տրանսպորտի սպասող մեր աննկուն համաքաղաքացիների շարքերը:



# Հանդիպում Հնդկաստանի նորանշանակ դեսպանի հետ

Նյու Դելիում շաբաթ օրը՝ դեկտեմբերի 15-ին «Հայ-հնդկական բարեկամություն» կազմակերպությունը (IAF) հյուրընկալել էր Հայաստանում ու Վրաստանում Հնդկաստանի նորանշանակ դեսպան, դոկտոր Թ. Սուրեշ Բաբուին մինչ նրա Հայաստան ժամանելը: Վերջինիս հետ ինստրուկտիվ հանդիպումը IAF-ը կազմակերպել էր Ջավահարլալ Ներուի անվան համալսարանում, որտեղ ներկա էին նաեւ Աչալ Կումար Մալհոտրան, որը եղել է Հայաստանում ու Վրաստանում Հնդկաստանի դեսպանը, Հնդկաստանում հայկական դեսպանության հյուպատոս Լուսիկ Թովմասյանը, թյունը «Հայ-հնդկական բարեկամություն» ՀԿ-ի անդամներ են:

IAF-ից նաեւ տեղեկանում ենք, որ Պուրուշոթամ Ագրավալի հեղինակած «Հինդի Սառայ, Երեւանից Աստրախան» (Hindi Sarai: Astrakhan via Yerevan) գիրքը վերջերս է լույս տեսել, եւ հանդիպման ընթացքում պրոֆեսորը անդրադարձել է այն ժամանակին, որը նա անցկացրել է Երեւանում մինչ Աստրախան մեկնելը: Իսկ դոկտոր Թ. Սուրեշ Բաբուն պատմել է, որ առաջին անգամ Հայաստանի մասին իմացել է, երբ հայրը նրան տարել է Չեննայի (նախկինում՝ Մադրաս) հայկական շուկան: Դոկտոր Թ.



պրոֆեսոր Պուրուշոթամ Ագրավալը, հնդիկ նկարչուհի Բաբիտա Բիսվասը, Հնդկաստանում սովորող հայ ուսանողներ, ինչպես նաեւ Երեւանի բժշկական համալսարանն ավարտած հնդիկ ուսանողներ ու տարբեր զբաղմունքների, մասնագիտությունների տեր մարդիկ, որոնք պարզապես հետաքրքրված են հայ-հնդկական հարաբերություններով: Ի դեպ, ներկաների մեծամասնու-

Սուրեշ Բաբուն ընդգծել է, որ Հայաստանի ու Հնդկաստանի միջեւ կան փոխադարձ բարյացակամություն եւ այնպիսի հիմք, որը կօգնի նրան Հայաստանում հեշտությամբ շարունակելու իր աշխատանքը:

Հանդիպմանը ներկաները նաեւ հնչեցրել են հարցեր հայ-հնդկական հարաբերությունների վերաբերյալ ու ստացել պատասխաններ:

Ի. Պ.

# «Անհրաժեշտ է քաղաքական օրակարգի նոր ձեւաչափ»

Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախագահ **Արամ Գասպարի Սարգսյանը** կարծում է, որ Հայաստանի ներքաղաքական վիճակն այնպես է դասավորվել, որ այժմ ուղղակի անհրաժեշտ է քաղաքական օրակարգի նոր ձեւաչափ գտնել: Այս մասին նա նշեց երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ:

Ըստ Արամ Սարգսյանի՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ՀՀԿ հերթական համագումարում իշխանությունների գործունեության արդյունքների ամփոփումն էր. «Նախագահն ավելի շուտ իր բարի ցանկություններն արտահայտեց»:

Ինչ վերաբերում է ԲՀԿ-ի եւ Գագիկ Ծառուկյանի՝ ընտրություններին չմասնակցելու ու որեւէ թեկնածուի չպաշտպանելու որոշմանը, այս առնչությամբ Արամ Սարգսյանն ընդգծում է, որ այդպես էլ պետք է լիներ, քանի որ քաղաքական պայքարին պետք է մասնակցեն գաղափարական մարդիկ միայն:

Ի. Պ.



# Վարուժան Խաչատուրյան

Բեյրութում լույս տեսնող ՌԱԿ պաշտոնաթերթ «Զարթօնք» օրաթերթից ցավով տեղեկացանք, որ առաջացյալ տարիքում Լոս Անջելեսում մահկանացուն է կնքել վաստակաշատ ռամկավար գործիչ, ՌԱԿ կենտրոնական վարչության նախկին անդամներից, ՌԱԿ Լիբանանի շրջանային վարչության նախկին ատենադպիրներից, ԹՄՄիության հիմնադիրների մարմնի նախկին անդամ Վարուժան Խաչատուրյանը:

Աշխատեզով գործարար եւ գործի մարդ, Վ. Խաչատուրյանը ՌԱԿ-ի եւ ԹՄՄիության միջոցով ծառայել է իր ազգին՝ գործնական հմտություններով կարեւոր մասնակցություն բերելով ազգային-կուսակցական տարբեր ձեռնարկումներում, միաժամանակ իր առեւտրային ուղեւորությունների ընթացքում սերտ կապեր եւ համագործակցություն ստեղծելով տարբեր գաղութների միջեւ:

Մեր խորազգաց վշտակցությունները ընտանիքին եւ Խաչատուրյան մեծ գերդաստանին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ստամբուլի քաղաքապետարանը եկեղեցու հողատարածք է հատկացնում ասորական համայնքին

## *Ո՞րն են նկրտումները. ապահովել ցեղասպանության առնչությամբ ասորիների լռությո՞ւնը, թե՞ իրացնել կաթոլիկների հին գերեզմանատունը*

1915-ին մարդասպան թուրք հրոսակը, ձեռնամուխ լինելով արեւմտահայերի բնաջնջմանը, սկսեց թալանել նրանց ունեցվածքը: Ինչ վերաբերում է հայկական եկեղեցիներին ու վանքերին, ապա նրանք հիմնովին կողոպտվեցին, այնուհետեւ դարձան հրո ճարակ, հաճախ հոգեւորականների, այնտեղ ապաստանած կամ ողջակիզելու համար արգելափակված հայ կանանց եւ երեխաների հետ:

1919-ին Օսմանյան Թուրքիայում ասպարեզ իջան քեմալականի կերպարանք ստացած երբեմնի իթթիհադականները, հայ ժողովրդի արյունարբու դահիճների գլխավորությամբ, որպեսզի ապահովեն երիտթուրքերի ցեղասպան քաղաքականության շարունակականությունը: Շարունակվեց նաեւ արեւմտահայության բնաջնջումը, հայկական եկեղեցիների եւ վանքերի կողոպուտն ու հրկիզումը՝ նմանապես:

1923-ի հոկտեմբերի 29-ին Թուրքիայում հռչակվեց հանրապետական կարգ: Քանի որ քեմալականներն արդեն, ավարտին հասցնելով Հայոց ցեղասպանությունը, կատարված էին համարում առաջադրանքը, ձեռնամուխ եղան հայկական պատմամշակութային հետքի վերացմանը ժամանակակից Թուրքիայում: Շուրջ 2500 հայկական եկեղեցի եւ 457 վանք պետականորեն հողին հավասարեցվեցին քեմալականների շատ քաղաքակիրթ, աշխարհիկ ժողովրդավար հանրապետությունում: Եթե չլիներ առանձին անհատների միջամտությունը, ինչպես, ասենք, քուրդ գրող Յաշար Քեմալինը, ապա նույն ճակատագրին կարժանանային Վանա լճի Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին եւ Անիի ավերակները:

2002-ին Թուրքիայում միանձնյա իշխանության եկավ վարչապետ Էրդողանի իսլամամետ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը: Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ առաջին անգամը լինելով, այս կուսակցության կառավարությունը որոշում ընդունեց վերադարձնել հայ, հույն, հրեա ազգային փոքրամասնություններից նախորդ կառավարությունների օրոք առգրավված կալվածքները, միաժամանակ վերանորոգեց հույն ուղղափառ եկեղեցուն պատկանող Տրապիզոնի Սումելա վանքն ու Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին:

Թեեւ վերանորոգված վանքն ու եկեղեցին թանգարանի կարգավիճակով հանձնվեցին Թուրքիայի մշակույթի նախարարության տնօրինությանը, այնուամենայնիվ, վերականգնումը «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության՝ «Ազգայնական շարժում» կուսակցության նախաձեռնությամբ ազգայնամոլների թիրախը դարձրեց Էրդողանի կառավարությանը, թե Պոնտոսում հունական կայսրությունը, իսկ Վանում Բագրատունյաց թագավորությունը վերականգնելու թաքուն նպատակներ է հետապնդում: Մինչդեռ Բագրատունիները իշխել էին ոչ թե Արծրունիների նման Վասպուրականում, այլեւ Կարսում եւ Անիում:

Էրդողանի կառավարությունը Թուրքիայում 1-2 հայկական այլ եկեղեցի վերանորոգելու մտադրություն է հայտնել: Ի դեպ, քրդաբնակ Դիարբեքիրի Սուրբ Կիրակոսը վերականգնվել է քաղաքապետարանի նախաձեռնությամբ, հետեւաբար կառավարության հետ առնչություն չունի: Ուշագրավը, սակայն, սոսկ Տրապիզոնի Սումելա վանքի կամ Վանա լճի Սուրբ Խաչի վերականգնումը չէ, այլեւ՝ Ստամբուլում նոր եկեղեցի կառուցելու համար ասորի համայնքին հողատարածք հատկացնելու քաղաքապետարանի որոշումը:

Հայտնի մտավորական Ալի Սաիդ Չեթինօղլուն, որն իր ուսուցիչն է համարում Ռագըփ Զարաքոլուին, երեկ Haytert կայքէջում, որոշմանն անդրադառնալիս, դա համարում է պատմական եւ ավելացնում. «Եթե հուշարձանների պահպանման կոմիտեն հաստատի Ստամբուլի քաղաքապետարանի որոշումը, ապա Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամը լինելով, հիմքից կառուցված կլինի առաջին եկեղեցին երկրում»:

Չեթինօղլուն առանց մանրամասնելու, որոշակի վերապահություն է դրսեւորում ինչպես ասորական համայնքին եկեղեցու համար հողատարածք հատկացնելու Ստամբուլի քաղաքապետարանի որոշմանը, այնպես էլ՝ Բեյրայի ասորական Սուրբ Աստվածածին եկեղեցու հիմնադրամի կառուցման նախաձեռնությանը:

Ինչո՞ւ: Նախքան հարցի պարզաբանումը, Չեթինօղլուն հիշեցնում է 1959-ին Ստամբուլի Թառլաբաշի թաղում վերանորոգված ասորական եկեղեցու մասին, որը փայտաշեն էր: Եկեղեցու վերանորոգմանը ձեռնամուխ էր եղել 1940-ականներին Մարդինից Ստամբուլ տեղափոխված ասորի Աբդուլնուր Այդինեըը, որը ջերմ բարեկամական հարաբերությունների մեջ է եղել դիարբեքիրցի Նեդիմ Փիրինչզադեի հետ: 1915-ի ցեղասպանության օրերին Փիրինչզադեները, որոնք պանթուրքիզմի Զիա Գյոքալփի անմիջական ազգականներն են, գլխավոր դահիճի դեր են կատարել Դիարբեքիրի վիլայեթում:

Նշելով այդ մասին, Չեթինօղլուն ընդգծում է, որ Այդիներ ընտանիքն էլ ցեղասպանության զոհերից է: Համենայն դեպս, Այդիները դիմում է Փիրինչզադեին, նրանք միասին հանդիպում են արտգործնախարար Ֆաթին Ռյուշթու Զոլուին: Հանդիպմանը նախարարն ասում է. «Թեեւ փայտաշեն եկեղեցու փոխարեն քարաշենի կառուցումը հակասում է օրենքներին եւ Լոզանի պայմանագրի դրույթներին, սակայն ես անհրաժեշտ հրահանգը կտամ եւ ոչ ոք ձեզ չի խանգարի»:

Հիրավի, ասորական փայտաշեն եկեղեցին քանդում են, նրա տեղը, ընդ որում՝ առանց թույլտվության, քարաշեն եկեղեցի են կառուցում եւ ոչ ոք, շնորհիվ կառավարող շրջանակներում մեծ ազդեցություն վայելող Նեդիմ Փիրինչզադեի միջնորդության, չի խանգարում շինարարությանը:

Նկատի առնելով 1959-ին վերակառուցված քարաշեն եկեղեցին, Ստամբուլում նախատեսվող ասորական նոր եկեղեցու առնչությամբ, Չեթինօղլուն նշում է. «1915-ի առումով ասորական համայնքը լռություն է պահպանում: Չենք հարցնում, թե դա որքա՞ն է նպաստել նոր եկեղեցու կառուցման հանգամանքին: Ոչ էլ ուզում ենք իմանալ եկեղեցու շինարարության համար միջնորդող անձի անունը: Բայցեւայնպես, նախազգուշացնում ենք, որ Ստամբուլի քաղաքապետարանը եկեղեցի կառուցելու համար ասորական համայնքին որպես հողատարածք հատկացրել է հենց Յեշիլքոյում՝ Այա Ստեֆանոսի կաթոլիկ գերեզմանատունը, որքան էլ Բեյրայի ասորական Սուրբ Աստվածածին եկեղեցու հիմնադրամի գործադիր խորհրդի նախագահ Սաիդ Սուսին հերքի այդ փաստը: Ի դեպ, Սաբանջիի մզկիթի համար էլ հատկացվել էր Ադանայի հայկական գերեզմանատունը: Հուսամ, Ստամբուլի քաղաքային իշխանությունները նախքան ասորական եկեղեցու շինարարությունը, կցուցաբերեն անհրաժեշտ զգոնություն»:

Այլ կերպ, թուրքական իշխանությունները Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ եկեղեցի կառուցելու իրավունք տալով ասորական համայնքին, փոխարենը ձերբազատվում են առգրավված տարածքները, այսինքն՝ Այա Ստեֆանոսի կաթոլիկ գերեզմանատունը համայնքին վերադարձնելու օրենքով նախատեսված պարտականությունից: Ակնհայտ է, որ Ստամբուլում նախատեսվող ասորական եկեղեցու կառուցումը այդ իշխանությունների համար անհամեմատ նախընտրելի է, քան կաթոլիկ գերեզմանոցի հանձնումը սեփականատերերին, հատկապես այն դեպքում, երբ սեփականատերը Վատիկանն է:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Ալեն Դելոն. «Չգիտեի, որ Երեւանում ինձ այսքան սիրում ու գնահատում են»

*1-ին էջից*

«Կան 5-6 ֆիլմեր, որոնք համաշխարհային ճանաչում ունեն: Հենց դա է պատճառը, որ ես հիմա վախենում եմ իմ արվեստի նկատմամբ վերաբերմունքն ու կարծիքը փոխել ինչ-որ անհաջող դերով»:

Մինչ որեւէ ֆիլմի անցնելը Դելոնը մանրամասն ուսումնասիրում է այն, համեմատական անցկացնում իր կերպարի հետ եւ միայն համոզվելով, որ ինքն անհրաժեշտ է այդ ֆիլմին, իսկ դերն՝ իրեն, համաձայնում է խաղալ:

Վերջին ֆիլմը, որտեղ խաղացել է Դելոնը, «Շնորհավոր Ամանոր, մայրեր» կատակերգությունն է, որը բաղկացած է 5 առանձին նովելներից, եւ դրանցից յուրաքանչյուրը նկարահանել է առանձին ռեժիսոր: Ֆիլմը, որի բյուջեն կազմում է վեց միլիոն դոլար, հանդիսատեսը հնարավորություն կունենա դիտելու դեկտեմբերի 27-ից:

Առավոտյան ժամը վեցին Ալեն Դելոնն արդեն Երեւանում էր: Նա հանդիպել է նախագահ Սերժ Սարգսյանին, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդին, այցելել Ծիծեռնակաբերդ:

Ծափահարություններով ու ողջույններով սկսվեց նրա եւ ռուս դերասաններ Իրինա Ռոզանովայի, Կոնստանտին Կրյուկովի, պրոդյուսերներ Վալերի Սահարյանի եւ Ղեւոնդ Անդրեասյանի մամուլի ասուլիսը «Երեւան» հյուրանոցում:

«Շնորհավոր Ամանոր, մայրեր» ֆիլմում Դելոնը համաձայնել է խաղալ անվճար: «Ֆիլմն ինձ հոգեհարազատ է, նվիրված է մայրերին, իսկ մոր թեման ինձ համար շատ անձնական ու շատ նվիրական է: Մորս կորցրել եմ 16 տարի առաջ, եթե հիմա հնարավորություն ունենայի իրեն տեսնելու, ապա ոչինչ չէի անի, ուղղակի ամբողջ ժամանակս կանցկացնեի իր հետ, կպարուրեի նրան այն մեծ սիրով, որին նա արժանի է: Այն, ինչին հասել եմ, հասել եմ մորս շնորհիվ, իմ արտաքինն ու իմ ձեռքբերումները նրա շնորհիվ են: Մայրս չկա, բայց ես միշտ ինձ մոտ պահում եմ այն իրը, որ նա նվիրեց ինձ, դա փոքրիկ խաչն է», ասում է Դելոնը:

Ֆիլմի սյուժեն հոգեհարազատ է նաեւ ֆիլմի պրոդյուսերներից Վալերի Սահարյանի համար: Մայրն արդեն մեկ տարի Երեւանում է բնակվում ու ինքը երջանիկ է, որ ֆիլմի պրեմիերան Երեւանում է եւ սա գեղեցիկ նվեր է իր եւ բոլոր մայրերին:




Ալեն Դելոնին հարց տալու հնարավորություն ընձեռվեց նաեւ **«Ազգին»**:

Թե ինչ է տանում Հայաստանից եւ Երեւանն ինչպիսին կմնա իր հիշողություններում՝ Դելոնն ասում է. «Առաջին անգամ եմ Հայաստանում, եկել եմ առավոտյան ժամը վեցին, անկեղծ եմ ասում, ես չգիտեի, որ ինձ Երեւանում այսքան սիրում ու գնահատում են: Թեեւ Շառլ Ազնավուրն իմ ընկերն է, ես չէի կարող ենթադրել, որ ինձ այստեղ ճանաչում ու գնահատում են: Ինչպես ենթադրեց նախագահ Սերժ Սարգսյանը, Շառլը պարզապես վախեցել է, որ ես երես կառնեմ, եթե իմանամ, թե որքան են ինձ սիրում ձեր երկրում»:

Երեւանը սիրել, ցուրտ եղանակին մարդկանց ջերմությամբ ոգեւորվել ու զարմացել է նաեւ Կոնստանտին Կրյուկովը: Նրա գնահատմամբ՝ ֆիլմը շատ բարի է ստացվել, իսկ նկարահանումներն անցել են ջերմ մթնոլորտում:

Դերասանուհի Իրինա Ռոզանովան հիշում է, որ նկարահանման հրապարակում Ալեն Դելոնին առաջարկել են գրիմ անել, որպեսզի ծածկեն կնճիռները, սակայն դա վրդովեցրել է դերասանին:

«33 տարեկանում ես եղել եմ տիեզերքի ամենագեղեցիկ տղամարդը, իսկ հիմա, երբ արդեն մեծացել եմ, այդ կնճիռները, որպես իմաստության նշաններ, կլինեն լավագույն գրիմը», ասել է դերասանը:

Վերջին շրջանում Ալեն Դելոնն առավել հազվադեպ է խաղում ֆիլմերում:

«Իմ կարիերան բարձունքի վրա է, եւ ես մտածում եմ կինոյից հեռանալու մասին, սակայն մինչ այդ ունեմ եւս մեկ բաղձալի երազանք: Կինոյից հետո ցանկանում եմ ինձ զգալ նաեւ բեմում: Դա կլինի ստեղծագործական կյանքի իմ վերջին ակորդը: Բեմում կխաղամ իմ 22-ամյա դուստր Անուշկայի հետ», ասել է դերասանը:

Այսօր առավոտյան Դելոնն արդեն կմեկնի Մոսկվա: Երեկոյան կկայանա ֆիլմի պրեմիերան արդեն ռուս հանդիսատեսի համար:

## Գործն է անմահ

# Երբեք առօրեականի մակարդակին չէր իջնում, նա տոհմապետ էր, նա հայի հայն էր

***Դեկտեմբերի 17-ին կլրանար Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 85-ամյակը: Հրանտ Հակոբյան բացառիկ անհատ, վաստակաշատ մանկավարժ, մարդկային բարձր արժանիքներով օժտված գիտնական ու դասախոս, ընտանիքի սիրող հայր եւ անզուգական ընկեր: Պրոֆեսոր Հրանտ Հակոբյանի նվիրական երազանքը հայրենի եզերքում բուհ հիմնելն էր, ինչը հնարավոր եղավ իրականացնել միայն Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո, երբ ՀՀ կառավարության 1993 թվականի մայիսի 5-ի որոշմամբ ազդարարվեց Գավառի պետական համալսարանի ծնունդը: Տարեցտարի համալսարանը կայացավ, ինքնահաստատվեց Հայաստանի բուհական համակարգում եւ Գեղարքունիքի մարզում ձեռք բերեց ոչ միայն գիտական, կրթական, մշակութային, այլեւ սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական կարեւոր նշանակություն: Համալսարանի հիմնադրումը դարձավ պրոֆեսոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի կյանքի գործը:***



Սերունդների հոգեմշակութային նստվածքը կարող է ի հայտ գալ մեկ մարդու մեջ: Այդ մարդը սովորական մարդ լինել չի կարող: Նա անձնական կյանքով չի ապրում. ուսուցիչ է, խորհրդատու, լավատես, ցավակից, կանխատեսող, հուսադրող: Բոլորը նրանից են հարցնում, նրա խոսքերով հուսադրվում, առաջ շարժվում: Բայց նա արտակարգ շնորհ իրեն չի վերագրում: Քայլում է, ձեռքերը շարժում, ժպտում, թախծում, ձեռքը դնում երիտասարդի ուսին: Օրը անցնում է, եւ ժամանակը շարունակվում: Ժամանակը հարստանում է տասնամյակից տասնամյակ, եւ տեսնում ես, որ Հրանտ Խաչատուրի Հակոբյանի պես մարդու գործունեությամբ այն դարձել է հայոց մեծ ժամանակ՝ իր հարազատ եզերքի պատմության մեջ: Եզերքը զորանում է իր զավակի տաղանդի հոգեշնորհ նպաստներով: Միջնադարից մինչեւ օրս պատմությունը լուսավորվում է մտքի ու բանականության լույսով: Սա է Մատենադարանի խորհուրդը: Հրանտ Հակոբյանի կյանքը ձուլված էր այդ խորհրդին: Եվ նա օր առ օր այդ խորհուրդը բաժանում, բաշխում էր ամենքին եւ յուրաքանչյուրի:

Հրանտ Հակոբյանը մարդ էր՝ վերածննդի դարաշրջանի հսկաների էներգիայով եւ բանականությամբ զարդարուն: Աստված մարդկանց տալիս է բանականություն. Հրանտ Հակոբյանին Աստված զարդարե՛լ էր բանականությամբ: Նա անտես դափնեպսակ էր կրում: Հմայիչ էր, անձանձիր անձնավորություն, միշտ առանցքային, կենտրոնու՛մ, առաջատա՛ր: Կարծես եկել էր դարերից եւ գնում էր դեպի դարերը հեռու: Երբեք առօրեականի մակարդակին չէր իջնում: Միշտ վերի՛նը, էակա՛նը, ընդհանրացու՛մը:

Մեծերի հոգեկան էներգիան նրա մեջ անդադար նախագծումների եւ դրանց լուծումների ճանապարհ էր հարթում: Նա Համալսարան ստեղծեց: Դժվարությունները շատ էին, բայց Հրանտ Հակոբյանը առաջին իսկ քայլերից իր մեջ ուներ Համալսարանի հեռապատկերն ու խորապատկերը: Նա գործում էր իր ներքին հսկողության ուժով, որը վեր էր ամեն ինչից: Պետական մտածողությունը գիտնականի մեջ նստած էր խորությամբ՝ ավելացրած ժողովրդական մտածողությունը:

Հրանտ Հակոբյանը ստեղծեց դեպի գիտություն շարժում, որն այսօր էլ ակտիվ բնույթ ունի:

Նա տարված էր իր Րաֆֆիով: Կարծես ինքը կանգնած էր ֆիդայական շարժման գաղափարախոսության ակունքում: Այդ գաղափարախոսությունը միշտ թարմ էր Հրանտ Հակոբյանի գիտակցական կյանքում: Նա գրեց աշխատություն Րաֆֆու ստեղծագործության մասին, որն անպայման հասարակագիտական վերլուծության առումով լավագույններից է: Նրա աշխատանքային առանձնասենյակում Րաֆֆու դիմանկարն է:

Գիտնական այրը հեռատես էր, իմանալով պատմություն, գրականություն եւ փիլիսոփայություն՝ նա գործում էր աներեր ու անսխալ. նման էր մարգարեի: Ես նրան զուտ անհատական հետաքրքրությունների մեջ չեմ տեսել: Զարմանալի է, միշտ եւ ամենուր գիտնական էր, անբաժան հանրության խնդիրներից, առօրյայից վեր կանգնած: Չեղավ գոնե մի պահ, որ նա սովորական մարդ լիներ: Կարդում էր եւ կարդում՝ բաց չթողնելով նորը, արդիականը: Խորն էր Հակոբյանի կռահողականության ուժը: Զգում էր, գիտեր, չէր սխալվում, խոսքը չափանիշ էր: Նրան լսում էին, կարոտ ունեին նրա ներկայության: Հրանտ Հակոբյանը տոհմիկ հայ էր, կարծես Խորենացու եւ Թումանյանի ընկերը: Նա հայի հայն էր. ինչ պետք է բնությունը պարգեւեր հային՝ որպես տեսակ, պարգեւել էր նրան: Ապրելը նա դարձրեց գիտություն, իսկ կենցաղավարելը՝ արվեստ:

Հրանտ Հակոբյանի կյանքում հայրենասիրությունը ոչ թե գաղափար, այլ կենսակերպ էր: Նա քայլող դպրոց էր եւ հետո, ինչպես տեսանք, համալսարան: Սա բա՞խտ է, թե՞ ճակատագիր: Երկուսն էլ: Բայց իր գործունեությունը նա չէր առանձնացնում, որեւէ պարագայում չէր ընդգծում: Ստեղծման պահանջը առաջ էր տանում. ինքնագնահատումը ավելորդ էր:

Համալսարանով նա իր շուրջը համախմբեց իր ժողովրդին: Հակոբյանը ծանր ժամանակներում դարձավ տոհմապետ, տոհմի պաշտպանը: Համալսարանը սահմանապահ է: Հրանտ Հակոբյանը ամրապնդեց Գեղարքունիքը, նա կանխեց զանգվածային տեղաշարժի աղետը: Գեղարքունիքը պարտք է նրան, պարտք ենք բոլորս: Նա եկավ հոգու գանձեր շռայլելու: Գործեց անընդհատ, կանգ չառավ: Նա իր գործով ապացուցեց, որ մարդը ստեղծող է, անհաղթ:

Եկել էր՝ պատասխան տալու բոլորի համար: Եկել էր՝ Գեղամա տունը վերաշինելու, նորացնելու: Վերաշինեց, նորացրեց:

Տասնամյակներ շարունակ նա բայազետցիների համար «մեր Հրանտ»-ն էր, որը համարժեք էր հայրենակիցների հպարտության, պատվախնդրության ու «դրսում» ներկայանալու «անցաթղթի»:

Նա մնաց «մեր ընկեր Հակոբյանը»՝ ուսանողների, «մեր Հրանտը»՝ ժողովրդյան հավաքական գիտակցության մեջ:

Հրանտ Խաչատուրի Հակոբյանի կյանքը մնում է գործող, եզերքը բերդի պես ամուր պահող, գավառցիների տոհմիկ հայությունը հավերժացնող Համալսարան:

Մեծ մարդու գործն ու հիշատակը լույս են սփռում: Հոգեւոր էներգիա են հաղորդում: Գեղամա աշխարհի երիտասարդները ճամփա են գնում Հրանտ Հակոբյանի «Բանականություն, գիտություն» պատգամով: Այժմ եւ միշտ:

**ՆՈՐԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ**
**ՀՀ գրողների միության Գեղարքունիքի մարզային բաժանմունքի նախագահ, ԳՊՀ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու**

# Վենետիկի Մխիթարյան միաբանության մշակութային ժառանգությունը կթվայնացվի

**ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը դեկտեմբերի 16-17-ը մասնակցել է Վենետիկի Մխիթարյան Միաբանության եւ ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառումներին՝ նվիրված Հայ գրատպության 500-ամյա հոբելյանին:**

**Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ սփյուռքի նախարարությունից, միջոցառումների մեկնարկը տրվել է դեկտեմբերի 16-ին Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան Միաբանության Մայրավանքի եկեղեցում, որտեղ հայ գրատպության նվիրյալների հոգիների հանգստության համար մատուցվել է Սուրբ Պատարագ:**

**Առանձնակի հետաքրքրություն է ներկայացրել Սուրբ Ղազարում բացված՝ տպագրության հնագույն սարքերի եւ գործիքների ցուցադրությունը: Մասնակիցները կարեւորել են հայ գրքի հայտնի տպագրական կենտրոններից մեկի պահպանումը եւ համալրումը նոր ցուցանմուշներով: Այդպիսով այն կդառնա հայ տպագրության յուրօրինակ թանգարան, հայկական մշակույթի կարեւոր անձնագիր, համահայկական նշանակալի գործի սկիզբ, այցեքարտ կղզի այցելողների համար:**

**Նախարարը բացման խոսքում գնահատել է մխիթարյանների անուրանալի ներդրումը հայ գրատպության զարգացման գործում եւ նշել, որ ՀՀ Նախագահի հովանավորությամբ եւ աջակցությամբ շուտով կսկսվեն Վենետիկի Մխիթարյան միաբանության մշակութային ժառանգության թվայնացման աշխատանքները:**

**Երեկոյան Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի սրահում տեղի ունեցավ «Գասպար Եդեսացի» համույթի «Պայծառ Նաիրի» երաժշտական-բանաստեղծական պիեսի բեմադրությունը: Իտալացի երիտասարդները ներկայացրել են հայ բանաստեղծների եւ երգահանների ստեղծագործությունները հայերենով:**

**ՀՀ սփյուռքի նախարարն իր ողջույնի խոսքում շնորհակալություն է հայտնել համույթի իտալացի անդամներին բարձրարվեստ կատարումների համար: Նա միջոցառումը գնահատել է որպես հայ-իտալական մշակութային բարեկամության լավագույն օրինակ:**

**Դեկտեմբերի 17-ին կայացել է ՀՀ սփյուռքի նախարարության եւ Մխիթարյան Միաբանության կողմից կազմակերպված «Հայ գրքի հետքերով» խորագիրը կրող գիտաժողովը, որին մասնակցել են հայ եւ այլազգի գիտնականներ, հայագետներ:**

**Բացման խոսքով ելույթ ունեցավ Մխիթարյան Միաբանության Ընդհանրական աբբահայր Գերաշնորհ Հայր Եղիա վրդ. Քիլաղպյանը:**

**Գիտաժողովում ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն իր ելույթում անդրադարձել է Մեսրոպյան գյուտից հետո հայ ժողովրդի հոգեւոր կյանքում Վենետիկում առաջին գրքի նշանակությունը, եւս մեկ անգամ արժեւորել է Հակոբ Մեղապարտի՝ հայ հոգեւոր եւ աշխարհիկ մշակույթի զարգացման գործում ունեցած ավանդը, ներկայացրել հայ գրքի անցած ճամփան եւ նախանշել բարձր տեխնոլոգիաների առկայության պայմաններում այսօրվա անելիքները:**

**Ելույթներով հանդես են եկել պրոֆեսորներ Ռուդի Կորեան, Քլոդ Մութաֆյանը, Ագնես Ուզունյանը, Ռայմոն Գեորգյանը, Հ. Վահան Վրդ. Օհանյանը եւ այլ հայտնի գիտնականներ:**

**Գիտաժողովով ավարտվել են ուղիղ մեկ տարի առաջ հայ գրքի 500 ամյակին նվիրված տոնակատարությունները, որոնք սկսվել էին Վենետիկում՝ հայ առաջին գրքի ծննդավայրում, ՀՀ Նախագահի մասնակցությամբ:**

**Հայ գրատպության 500-ամյակի կապակցությամբ ՀՀ սփյուռքի նախարարությունը եւ Մխիթարյան Միաբանությունը համատեղ հիմնել են Հակոբ Մեղապարտի հուշամեդալը, որը հանձնվելու է հայ գրատպության պատմության մեջ մեծ ավանդ ունեցող գործիչներին:**

**Հակոբ Մեղապարտ հուշամեդալի պատրաստումը հովանավորում է «Զանգակ» հրատարակչությունը, որը Հայաստանի առաջատար հրատարակչություններից մեկն է:**

*ՀՀ սփյուռքի նախարարության մամուլի ծառայություն*

# Կարօ Նշանեան կը պարգեւատրուի համայնքային ծառայութեան համար

Այս մեդալը հաստատուած է Էլիզապէթ Բ թագուհիի գահակալութեան 60-ամեակին առթիւ: Մեդալը կը տրուի թագուհիին կողմէ՝ «ի պատիւ կանադացիներու խոշոր աւանդին եւ իրագործումներուն»:

Կարօ Նշանեան ծնած է Եգիպտոս: Մոնթրէալ փոխադրուած է 1962-ին: Կարօն համայնքին ծանօթ ղեկավար մըն է, որ գլխաւորած է համայնքային բազմաթիւ բարեսիրական ծրագիրներ, եղած է յաջող գործարար մը եւ միաժամանակ, բաս-բարիթոն երգիչ: Ան յաջողութեամբ միացուցած է այս երեքը աւելի քան 30 տարիներէ ի վեր:

Որպէս չարքաշ աշխատող մը, ան միշտ գործակցած է բարեսիրական եւ մշակութային կազմակերպութիւններու հետ ատենապետելով Մոնթրէալի համայնքին գլխաւոր ձեռնարկներու կազմակերպիչ յանձնախումբերը, սկսելով տարէցներու հոգածութենէն, կարիքաւորներու օգնութենէն, գործընկերներու վարպետութեան զարգացումէն մինչեւ երիտասարդ ու տաղանդաւոր արուեստագէտներու քաջալերումը՝ հանրային ելոյթներու կազմակերպութեամբ:

1998-ին, Կարօն արժանացաւ Հայ եկեղեցւոյ Սբ. Ներսէս Շնորհալի շքանշանին, շնորհուած Ամենայն Հայոց Գարեգին Ա կաթողիկոսին կողմէ:

Ան նաեւ յաջողած գործարար մըն է, որպէս հիմնադիրը եւ ընդհանուր տնօրէնը Dataworld (Canada) Inc.-ի, մասնագիտանալով համակարգիչներու եւ յարակից սարքաւորումներու տարածման մէջ: Կարօն հիմնադիր անդամ եւ որոշ տարիներու նախագահը հանդիսացած է Կանադայի Հայ գործարարներու խորհուրդին, որ միշտ ձգտած է պահպանելու գործառնութեան բարձր մակարդակ Մոնթրէալի գործարարներու շրջանակին մէջ:

Իր կիրքը սակայն երգի եւ արուեստի մէջ է: Կարօն մասնագէտներու կողմէ գնահատուած բաս-բարիթոն մըն է, որ հռչակ շահած է Կանադայի, Մ. Նահանգներու եւ Հայաստանի տարածքին, գլխաւոր քաղաքներու մէջ բազմաթիւ ելոյթներով եւ համերգներով: Ան հանդէս եկած է Էյվըրի Ֆիշըր, Սահմանադրական սրահի, Ֆլորընս Կուլտ համերգասրահի, Մեթրոփոլիթըն արուեստի թանգարանի, Մոնթրէալի ողիմպիական մարզադաշտի, Նոթր Դամ բազիլիքի եւ ծանօթ այլ համերգասրահներու մէջ:

Մոնթրէալի մէջ պարգեւատրումի արարողութիւնը կայացաւ 10 դեկտեմբերին:

*Թղթակից*

ԱԴՐԲԵՋԱՆ

# Նախկին պատգամավորը ձերբակալվե՞լ է

Ադրբեջանական կայքերը հակասական տեղեկություններ են հաղորդել Միլլի մեջլիսի նախկին պատգամավոր Գյուլար Ահմեդովայի «ձերբակալության» մասին: Ադրբեջանի ՆԳ նախարարությունից ասել են, թե «նման տեղեկատվության չեն տիրապետում»: Ավելի ուշ կարճ հաղորդագրություն է տարածել դատախազությունը եւ հերքել, թե Ահմեդովան ձերբակալված է: «Հասարակությունը կտեղեկացվի գործի հետագա ընթացքի մասին», այս բազմանշանակ ընդհանրացումն ունի դատախազության հաղորդագրությունը, ինչը Գյուլար Ահմեդովայի նկատմամբ կարծես իրոք խափանման միջոց ընտրած լինելու ենթադրության տեղիք է թողնում:

Հատկանշական է, որ նախկին պատգամավորն անձամբ չի անդրադարձել տարածված լուրին: Լրատվամիջոցներն էլ նրա հետ շփման մասին որեւէ ակնարկ չեն արել: Փոխարենը facebook-ի նրա էջում հայտնվել է գրություն, որով հերքվում է «իրեն ձերբակալելու մասին որոշ անպատասխանատու լրատվամիջոցների տարածած տեղեկատվությունը»: Contact.az-ին, սակայն, հաջողվել է պարզել, որ սոցիալական ցանցում Գյուլար Ահմեդովայի անունից գրություններ է անում այլ անձ, հավանաբար՝ նրա եղբայր Իլգար Միխաիլօղլուն:

Վերջինս, ի դեպ, մինչ Ահմեդովայի քաղաքական ֆիասկոն պաշտոնավարում էր Ադրբեջանի պետական հեռուստատեսությունում, որտեղից «հեռացել է ստեղծագործական բնույթի տարաձայնությունների պատճառով»: Ակնհայտ է, որ Միխաիլօղլուին պարզապես հեռացրել են աշխատանքից:

Գյուլար Ահմեդովան մի քանի օր առաջ Բաքվի պետական համալսարանում կառավարող կուսակցության սկզբնական կազմակերպության որոշմամբ հեռացվել է «Ենի Ազարբայջանի» շարքերից: Ավելի վաղ Pia.az-ը հաղորդել էր, որ նախկին պատգամավորը «փորձել է լքել Ադրբեջանը, սակայն օդանավակայանում մի խումբ քաղաքացիական հագուստով անձինք նրան քաղաքավարի դուրս են հրավիրել, նստեցրել մեքենա եւ ուղեկցել տուն»:

Կարելի է ենթադրել, որ այդ պահից Գյուլար Ահմեդովան տնային կալանքի է ենթարկվել: Ահմեդովայի անունն առաջին անգամ շրջանառվեց Youtube-ում տեղադրված տեսահոլովակի միջոցով: Խոսքն այն մասին է, որ նա միջնորդ է հանդիսացել նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիեւի եւ պատգամավորության թեկնածու Էլշադ Աբդուլլաեւի միջեւ՝ վերջինից պահանջել, ստացել եւ Մեհթիեւին է հանձնել 1 մլն դոլար:

Սկանդալային տեսահոլովակի տարածումից հետո Ադրբեջանի դատախազությունը հարուցել է քրգործ՝ «խաբեությամբ ուրիշի ունեցվածքին տիրանալու» հատկանիշով: «Ենի Մուսավաթ» թերթին տված հարցազրույցում, սակայն, Ահմեդովան հայտարարել էր, թե ինքը «միայն վկա է»: Ահմեդովայի անունից facebook-ում տարածվել էր գրություն, որով նա սպառնում էր «բացել բերանը եւ շատ բան ասել նրանց մասին, ովքեր իրեն անվանարկում են»:

Նա նկատի էր ունեցել իշխող կուսակցության գործադիր քարտուղար Ալի Ահմեդովին, որը Գյուլար Ահմեդովային անվանել էր «կուսակցությունն արատավորած եւ վստահությունը չարդարացրած»: Հավանաբար իշխանությունները կփորձեն լռեցնել նախկին պատգամավորին՝ նրան ձերբակալելու կամ տնային կալանքի ենթարկելու միջոցով:

Դրանով, սակայն, ինտրիգը չի վերանա: Գրեթե բոլոր մեկնաբանություններում խոսվում է, որ «կոմպրոմատը» ոչ թե Ահմեդովայի դեմ է, այլ՝ նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիեւի, որին «խորհուրդ են տալիս հեռանալ»: Մեհթեւն առայժմ դիմադրում է: Բայց երեւի՝ ոչ այնքան հաջող: Ինտերնետային obyektiv.tv-ին ինտերակտիվ հարցազրույց է վարել սկանդալային տեսահոլովակների «ռեժիսոր», Ֆրանսիայում որպես քաղաքական վտարանդի բնակվող Էլշադ Աբդուլլաեւի հետ: Վերջինս հայտարարել է, որ Ադրբեջանում «կոռուպցիայի կնքահայրը Ռամիզ Էնվերովիչն է (Մեհթիեւը)»:

Որոշ մեկնաբանություններում ակնարկվում է, որ Մեհթիեւի հավանական պաշտոնանկությունը «նաեւ արտաքին քաղաքական ենթատեքստ ունի»: Նա համարվում է «Մոսկվայի մարդ»: Իսկ Ադրբեջանը կարծես կանգնած է Ռուսաստանի հետ հարաբերությունների վերանայման որոշում ընդունելու շեմին՝ հօգուտ Արեւմուտքի:

Վ. Ա.

# Մի խումբ ռազմանավեր Սիրիայից կտարհանեն ռուսաստանցիներին

*Ապստամբները փրկագին են պահանջել առեւանգվածների համար*



Բալթյան նավատորմի ռազմանավերի եւ օժանդակ նավերի մի ջոկատ մեկնել է դեպի Սիրիայի ափերը: Բալտիյսկ քաղաքում զինվորական աղբյուրներից մեկը Ինտերֆաքս գործակալության թղթակցին հայտնել է, որ նախօրեին քաղաքից դեպի Միջերկրական ծով են մեկնել «Յարոսլավ Մուդրի» պահականավը, «Կալինինգրադ» եւ «Ալեքսանդր Շաբալին» մեծ դեսանտանավերը, «Լենա» տանկերը եւ մի քարշանավ: Դրանք դեպի Սիրիա են շարժվում ՌԴ քաղաքացիների տարհանմանը հնարավոր մասնակցություն ունենալու նպատակով:

Թեեւ նավախումբը պատրաստվել է որոշակի աճապարանքով, բայց խիստ գաղտնիացված է եղել: Ինտերֆաքսը նշում է, որ դրա վերաբերյալ տեղեկություններ ի հայտ էին եկել վերջին օրերին: Բալթյան նավատորմի հրամանատարությունը ռազմանավերի Բալտիյսկ վերադառնալու ժամկետը չի որոշել, քանի որ դա կախված է Սիրիայում իրադրության զարգացումից: Հնարավոր է, որ ռազմանավերի մի մասը տարհանված ՌԴ քաղաքացիների հետ շարժվի դեպի Սեւ ծովի ռուսական նավահանգիստներ:

ՌԴ արտգործնախարարությունը երեկ հայտարարել է, որ նախօրեին Սիրիայում 2 ռուսաստանցիների առեւանգած ապստամբները նրանց արձակման դիմաց պահանջում են փրկագին: 2 ռուսաստանցիների եւ նրանց իտալացի գործընկերոջ վրա դեկտեմբերի 17-ին հարձակում էր կատարվել Հոմսից Թարտուս ճանապարհին: Ռուսաստանցի դիվանագետները հայտարարում են, որ բոլոր հնարավորություններն օգտագործում են պատանդներին ազատելու համար:

Առեւանգված բոլոր 3 անձինք Հոմսի մերձակա արդյունաբերական գոտում գտնվող «Խմիշո» պողպատաձուլական ընկերության աշխատակիցներ են:

Դամասկոսում ՌԴ դեսպանությունը սիրիական կողմի հետ համատեղ բոլոր անհրաժեշտ գործողությունները ձեռնարկում է առեւանգված քաղաքացիների շուտափույթ ազատմանը հասնելու նպատակով:

Ինչ վերաբերում է ՌԴ քաղաքացիների տարհանմանը, ռուսական եւ արեւմտյան մի շարք լրատվամիջոցներ (մասնավորապես Ֆրանսպրես գործակալությունը) հաղորդում են, որ դեպի Սիրիա շարժվող ռուսական ռազմանավերի ջոկատի նպատակը հենց տարհանումն է: Նշվում է, որ պաշտոնական տվյալների համաձայն, Սիրիայում գտնվում են մոտ 5 հազար ռուսաստանցիներ, բայց իրականում այդ երկրում նրանց թիվը կարող է հասնել 30 հազարի:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

# Զենքի սահմանափակման հանրագիրը ստորագրել են աննախադեպ թվով մարդիկ



**ԱՄՆ-ում զենքի վերահսկողություն հաստատելու հանրագիրը ընդամենը 3 օրում հավաքել է աննախադեպ շատ՝ 160 հազար ստորագրություն: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Զենքի մատչելիության օրենսդրական սահմանափակումներ հաստատելու պահանջով նախագահ Բարաք Օբամային ուղղված դիմումը զետեղվել է նախագահական կայքէջի «Մենք ժողովուրդն ենք» նախագծի բաժնում Կոնեկտիկուտ նահանգի տարրական դպրոցում տեղի ունեցած սպանդից անմիջապես հետո:**

**«Այս դիմումի տակ դրված ստորագրությունները վկայում են, որ մենք բոլորս պահանջում ենք սկսել խորհրդարանական քննարկում, որի հիման վրա պետք է ընդունվեն քաղաքացիների համար զենքի մատչելիությունը կանոնակարգող օրենքներ», ասվում է հանրագրի տեքստում:**

**«Մենք ժողովուրդն ենք» նախագծի պայմանների համաձայն, հանրագիրը կարող է ԱՄՆ կառավարության քննարկմանը ներկայացվել, եթե մեկ ամսվա ընթացքում այն ստորագրում են առնվազն 25 հազար ընտրողներ: Ավելի վաղ այդ նախագծի շրջանակներում զետեղված դիմումներից ոչ մեկը նման կարճ ժամանակամիջոցում չէր հավաքել այդքան շատ ստորագրություն:**

**Դեկտեմբերի 14-ի առավոտյան 20-ամյա Ադամ Լենզան Նյութաուն քաղաքի «Սենդի Հուկ» տարրական դպրոցում սպանեց 20 երեխաների եւ 6 չափահասների, ապա անձնասպան եղավ: Լենզան զինված էր 2 ատրճանակով եւ հրացանով, որոնց օրինական սեփականատերը իր մայրն էր (նա սպանվել էր հենց սկզբում):**

**ԱՄՆ-ում զենքն ազատորեն կրելու իրավունքի հետեւողական կողմնակիցները հանրապետականներն են: Դեմոկրատ քաղաքական գործիչները, որոնցից է նախագահ Օբաման, հանդես են գալիս որոշակի սահմանափակումների օգտին, սակայն, որպես կանոն, ձեռնպահ են մնում օրենսդրական նախաձեռնություններից, որպեսզի չկորցնեն իրենց ընտրողների մի մասին:**

# Հյուսիսկորեական արբանյակը հավանաբար խափանվել է

**ԿԺԴՀ-ից օրեր առաջ տիեզերք արձակված արբանյակը, ըստ երեւույթին, խափանվել է եւ որեւէ ազդանշան չի հաղորդում:**

**«Արբանյակը պտտվում է իր առանցքի շուրջը, դառնում մերթ պայծառ, մերթ դժգույն, դեպի Երկիր շրջվելով այս կամ այն կողմով եւ տարբեր ձեւերով արտացոլելով Արեգակի լույսը: Դրանից մենք հետեւություն ենք անում, որ արբանյակը պատշաճ ձեւով չի գործում: Այն պարտավոր է մշտապես դարձած լինել Երկրի կողմը, որպեսզի տեսախցիկով կատարի մոլորակի մակերեւույթի նկարահանումներ», պարզաբանում է Հարվարդ-Սմիթսոնի աստղաֆիզիկական կենտրոնի փորձագետ Ջոնաթան Մաքդաուելը:**

**Արբանյակի խափանման մյուս վկայությունն այն փաստն է, որ ոչ ոք չի արձանագրել դրա գերբարձր հաճախականության ռադիոազդանշանների հաղորդումը, նշում է գիտնականը:**

**Սակայն ԱՄՆ ռազմավարական հրամանատարությունում եւ Պենտագոնում հրաժարվել են մեկնաբանել հյուսիսկորեական արբանյակի հետ կապված իրավիճակը, նշում է Ինտերֆաքս գործակալությունը:**

**Դեկտեմբերի 12-ին հյուսիսկորեական բալիստիկ հրթիռը հաջողությամբ ուղեծիր էր դուրս բերել արհեստական արբանյակ: Պաշտոնական Փենյանը հայտարարել էր, թե արձակված արբանյակը նախատեսված է օգտակար հանածոներ հայտնաբերելու եւ Երկրի եղանակին հետեւելու համար: Մինչդեռ Հարավային Կորեայում, ԱՄՆ-ում եւ Ճապոնիայում վստահ են, որ արբանյակի արձակման քողի տակ ԿԺԴՀ-ն իրականացրել է միջմայրցամաքային բալիստիկ հրթիռի փորձարկում:**

# Եգիպտոսի գլխավոր դատախազը հրաժարական տվեց

**Եգիպտոսի գլխավոր դատախազ Թալաաթ Իբրահիմ Աբդալլահը հրաժարականի դիմում է ներկայացրել նախագահին: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը: Նախագահ Մուհամմեդ Մուրսին նրան այդ պաշտոնում նշանակել էր նոյեմբերի 22-ին:**

**Գլխավոր դատախազը իր որոշումը բացատրել է նրանով, որ Եգիպտոսի քաղաքական ղեկավարությունը «պատերազմ է սկսել» դատական համակարգի դեմ:**

**Դատախազի դիմումը պաշտոնապես Գերագույն իրավաբանական խորհրդին կներկայացվի կիրակի օրը՝ դեկտեմբերի 23-ին:**

**Նոյեմբերի 22-ին Մուհամմեդ Մուրսին հրապարակեց հրամանագիր, որի համաձայն, «հանուն հեղափոխության պաշտպանության» իր ընդունած բոլոր որոշումները չեն կարող փոփոխվել մեկ ուրիշ ատյանում, այդ թվում՝ դատարանում: Նույն օրը նա հեռացրեց գլխավոր դատախազ Աբդա ալ Մալիք Մահմուդին եւ նրա պաշտոնում նշանակեց Թալաաթ Իբրահիմ Աբդալլահին:**

**Մուրսիի հրամանագիրը հարուցեց ընդդիմության եւ դատական համակարգի սուր քննադատությունը եւ Եգիպտոսում լուրջ ճգնաժամ առաջացրեց: Ի վերջո նախագահը զիջումներ արեց եւ հրաժարվեց այդ հրամանագրից:**



Առաջնորդվելով մեծանուն երգահան Կոմիտաս վարդապետի այն գաղափարով, որ երեխայի երաժշտական զարգացման հիմքում պետք է դրվի ժողովրդական երգն ու երաժշտությունը՝ պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ Յուրի Յուզբաշյանը հանրակրթական դպրոցների երաժշտության դասագրքերը կազմել է հենց ժողովրդական ու ազգային երաժշտության հիմքով, նաեւ կիրառել ազգայինից դեպի համամարդկային դասական երաժշտությանն անցնելու կարեւոր սկզբունքը: Ըստ Յ. Յուզբաշյանի՝ երեխայի մեջ դեռ փոքրուց պետք է ձեւավորել ազգային երաժշտական մտածողությունը: Սակայն... ինչքանո՞վ են դա-

# Ազգայինը՝ նաեւ երաժշտական մտածողության հիմքում




սագրքերը ծառայում իրենց նպատակին: Յուրի Յուզբաշյանը նշում է, որ հանրակրթական դպրոցների համար գրված դասագրքերը, ցավոք, չեն կարողանում ծառայել իրենց բուն նպատակին, ինչի պատճառներին զրուցակիցս անդրադառնում է հարցազրույցի ընթացքում: Սակայն մինչ պատճառներից խոսելը Յուրի Յուզբաշյանը հիշում է, որ 1967 ու 1969 թվականներին կազմված երաժշտության դասագրքերը, որոնց հեղինակներից մեկն էլ ինքն է, Հայաստանի հանրակրթական դպրոցների երաժշտության առաջին դասագրքերն էին, եւ դրանք գործածվեցին բավականին երկար ժամանակ: Երաժշտության այսօրվա դասագրքերի համեմատությամբ առաջին գրքերը ավելի ծավալուն էին, իսկ ներառված թեմաները՝ ավելի ընդգրկուն:

Երաժշտության դասագրքերի ծավալն ու բովանդակությունը սեղմվեցին տարիների ընթացքում: «Ծավալի փոքրացումից առարկան իհարկե տուժում է, սակայն կրթության ու գիտության նախարարության որոշումն է, որ տարվա ծրագիրը տեղավորենք ընդամենը 94 էջում», ասում է Յուրի Յուզբաշյանը: Սակայն նոր դասագրքերի հետ կա մի առավելություն՝ ամեն դասագրքի ձայնասկավառակը, որոնք զրուցակիցս միայնակ է պատրաստել, իսկ 2-6-րդ դասարանների դասագրքերը կազմել է երաժշտագետ Ալինա Փահլեւանյանի հետ: Ի դեպ, 7-րդ դասարանի նոր դասագիրքը պատրաստման ընթացքում է եւ կտպագրվի շուտով: Դասագրքերը նաեւ ունեն մեթոդական ձեռնարկներ ուսուցիչների համար:

Յուրի Յուզբաշյանը հեղինակն ու համահեղինակն է ուրիշ շատ դասագրքերի եւ մեթոդական ձեռնարկների, որոնք տպագրվել ու գործածվել են տարբեր տարիներին: Եվ բոլոր ժամանակներում էլ պրոֆեսորի գրքերի հիմքում եղել են ազգային երգն ու երաժշտությունը: «Կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողության զարգացումը» (1982), «Նոտագրության ուսուցումը հարաբերական եւ բացարձակ մեթոդներով» (1972), «Երաժշտության այբուբեն» գրքերի եւ էլի ուրիշ ձեռնարկների հեղինակը կամ համահեղինակն է Յուրի Յուզբաշյանը, որի աշխատանքներն ուղղված են հանրակրթական դպրոցների աշակերտներին ու մանկավարժներին: Զրուցակիցս 25 տարի դասավանդել է հանրակրթական դպրոցում, որտեղից ստացած փորձը տարիների ընթացքում օգտագործել է աշակերտներին ու մանկավարժներին ուղղված դասագրքերն ու ձեռնարկները կազմելիս, ինչպես ինքն է ասում՝ երեխաների հետ աշխատած մարդն ավելի լավատեղյակ է, թե ինչպես ուղղորդել երեխայի զարգացումն ու դաստիարակությունը:

«1956-ից սկսեցի դասավանդել հանրակրթական դպրոցում, աշխատում էի որպես երաժշտության ուսուցիչ ու երգեցիկ խմբի ղեկավար», պատմում է Յուրի Յուզբաշյանը, որը լինելով մասնագիտությամբ խմբավար՝ դպրոցում ձեռք է բերում նաեւ մանկավարժի փորձ: Յ. Յուզբաշյանն ավարտել է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի խմբավարական բաժինը, իսկ 1965-ից դասախոսում է Խ. Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանում, որտեղ նաեւ ընտրվել է գեղարվեստական դաստիարակության ու տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ապա՝ 11 տարի եղել գեղարվեստական դաստիարակության ֆակուլտետի դեկանը, ապա՝ խմբավարության ու ձայնագրման ամբիոնի վարիչը: Այսօր էլ Յուրի Յուզբաշյանը, որը նաեւ մանկավարժական գիտությունների դոկտոր է, դասախոսում է Մանկավարժական համալսարանում, իսկ հանրակրթության ոլորտում շարունակում է աշխատանքը՝ ուսումնական դասագրքեր կազմելով: Յուրի Յուզբաշյանը պատասխանատվությամբ ու նվիրված անում է իր աշխատանքը, բայց եւ նշում է՝ երաժշտության դասագրքերը, որոնց մի հեղինակն էլ ինքն է, միջնակարգ դպրոցների երաժշտական մանկավարժության մեջ թեեւ կարեւոր ներդրում են, բայց, ցավոք, դրանք չեն ծառայում իրենց բուն նպատակին: Իսկ դրա հիմնական պատճառը չհամակարգված վիճակն է, ինչը սկսվում է տարրական դասարաններից, որտեղ աշխատում են երաժշտական մասնագիտական կրթություն չունեցող դասվարներ, որոնք երաժշտության դասագրքերով ճիշտ դասավանդել չեն կարող: Նույնիսկ կան դպրոցներ, որտեղ ստանում են երաժշտության դասագրքերը, սակայն դրանք երեխաներին չեն էլ հասնում, կամ էլ հասնում են միայն որպես ժամանցային գրքեր: Տարրական դասարաններում երաժշտությունը դասավանդում են դասվարները, իսկ տարրականից բարձր դասարաններում արդեն դպրոցի տնօրենից է կախված, թե ով կդասավանդի՝ տնօրենը կհրավիրի՞ երաժիշտ-մանկավարժի, թե՞ ոչ: Խնդրի վերաբերյալ Յուրի Յուզբաշյանը կրթության ու գիտության նախարարի հետ եւս խոսել է, սակայն պատասխանը նույնն է՝ տարրական դասարանների դասվարի դրույքի մեկ ժամը կրճատելն ու դա երաժիշտ-մանկավարժին հատկացնելը հնարավոր չէ: Իսկ որտե՞ղ աշխատեն հանրակրթական դպրոցների համար պատրաստված երաժիշտ- մանկավարժները: Յուրի Յուզբաշյանն ասում է, որ Մանկավարժական համալսարանն ամեն տարի ավարտում են 35 երաժիշտ-մանկավարժներ, որոնք պատրաստվում են հենց հանրակրթական դպրոցներում որպես երաժշտության ուսուցիչներ աշխատելու համար, սակայն նրանցից որեւէ մեկը չի աշխատում հանրակրթական դպրոցում, քանի որ դպրոցներում նրանց համար աշխատատեղեր չկան: Եվ այս պայմաններում Մանկավարժական համալսարանում ամեն տարի շարունակվում է ընդունելությունը հանրակրթական դպրոցների «ապագա» երաժիշտ-ուսուցիչներ դառնալու համար դիմած դիմորդների, որոնք, սակայն, բուհն ավարտելուց հետո դպրոցում աշխատել չեն կարողանում: Իսկ այդ ընթացքում նախարարությունն էլ մրցույթ է հայտարարում երաժշտության դասագրքերի համար, մասնագետները կազմում են դրանք՝ շատ լավ հասկանալով, որ ինչքան էլ լավը լինեն գրքերը, դասագրքերը չեն կարողանում իրենց ասելիքը տեղ հասցնել: Բայց եթե վարվի կադրային ճիշտ քաղաքականություն, ինչն, ի դեպ, պետք է լինի պետության օրակարգային հարցերից մեկը, բայց բնավ այդպիսին չէ, ապա համապատասխան մասնագետները, այդ թվում՝ երաժիշտ մանկավարժները, կաշխատեն իրենց մասնագիտությամբ, իսկ երաժշտության դասերը հենց դպրոցից երեխաների մեջ կսկսեն ձեւավորել երաժշտական այնպիսի ճաշակ, որը հետագայում կնախընտրի ազգային, ժողովրդական երգն ու երաժշտությունը: Եվ դեռ փոքրուց նաեւ ազգային երաժշտության միջոցով երեխաները կստանան հայեցի դաստիարակություն, իսկ հասարակությունը կունենա երաժշտական այն բարձր ճաշակը, որի մասին շարունակ խոսվում է, սակայն հասնել դրան չենք կարողանում:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

---

ՆՈՐ ԳԻՐՔ

# «Գրել եմ մերօրյա «պրոմեթեւսների» մասին...»,- Արմեն Ալան

***Հարցազրույց արձակագիր, հրապարակախոս, «Ռեքվիեմ Պրոմեթեւսի համար» գրքի հեղինակ Արմեն Ալանի հետ:***

***Արմեն Ալանի հետ որոշեցի հարցազրույց անցկացնել իր «Ռեքվիեմ Պրոմեթեւսի համար» գրքի երեւանյան շնորհանդեսից հետո: Ինչպես եւ շնորհանդեսին, հիմա էլ հայացքում կա որոշ գրվածություն. ասես մտքերով այս չորս պատերից դուրս է գտնվում: Նկատեցի նույն անհանգիստ շարժումներն ու ինչ-որ բան որոնող աչքերը:***

**- Ձեր գիրքը կոչվում է «Ռեքվիեմ Պրոմեթեւսի համար», եւ առաջին հարցը, որ ծագում է. ինչո՞ւ հենց Պրոմեթեւսը դարձավ վեպի առանցքային կերպարը:**




- Պատահաբար ձեռքս ընկավ Ալբերտ Քամյուի էսսեներից մեկը, որը կարդալուց հետո ծնվեց վերնագիրը. ջահակիր կերպար, որ բարձրացնում է ջահը հանուն իր գաղափարների, հավատում է իր իդեալներին եւ զոհաբերում իր կյանքը այդ իդեալների համար: Եվ անմիջապես առաջացան զուգահեռներ 20-րդ դարի «պրոմեթեւսների» հետ, ինչպես Մահաթմա Գանդին, Անդրեյ Սախարովը, Մարտին Լյութեր Քինգը, Ալեքսանդր Սոլժենիցինը եւ իհարկե Ջոն Լենոնը, որոնք նույնպես ջահը ձեռքերին քայլում են եւ իրենց հետեւից տանում միլիոնավորների: Պրոմեթեւսը մետաֆորիկ սիմվոլ է, ազատության սիմվոլ:

**- Իսկ ինչո՞ւ ռեքվիեմ:**

- Արդեն նշեցի, որ վեպը գրել եմ մերօրյա պրոմեթեւսների մասին, մասնավորապես Ջոն Լենոնի, եւ հետեւաբար անխուսափելի էին երաժշտական թեմաները, որոնք նույնպես կարեւոր դեր են խաղում ստեղծագործության մեջ: Գիրքը ունի դասական ռեքվիեմի կառուցվածք, որը երաժշտականություն է հաղորդում գործին:

**- Ինչպիսի՞ն է գրքի ներքին կառուցվածքը բացի արտաքին՝ դասական ռեքվիեմին բնորոշ կառուցվածքից:**

- Գրքում առանձնանում են սյուժետային 3 հիմնական գծեր. առաջինը գեղարվեստական մասն է՝ Պրոմեթեւսի մասին պատմող ավանդությունը, 2-րդ գիծը համաշխարհային կարեւորագույն իրադարձությունների խրոնիկան է: Իրադարձություններ, որոնք այս կամ այն չափով էական նշանակություն են ունեցել մարդկության, այս կամ այն երկրի զարգացման, առաջընթացի վրա, եւ 3-րդը՝ «Beatles» խմբի պատմությունն է, այնուհետեւ Ջոն Լենոնի հասարակական-քաղաքական գործունեությունը:

**- Իսկ ինչո՞վ է պայմանավորված Բիթլների չորս անդամներից հենց Ջոն Լենոնին Ձեր հերոս դարձնելը:**

Բիթլների կազմալուծումից հետո, Ջոն Լենոնի հասարակական-քաղաքական գործունեությունը ինձ համար շատ տարօրինակ էր: Մի մարդ, որ ուներ վաստակած միլիոններ եւ կարող էր ապրել՝ ինչպես ցանկանար, հանկարծ թողնում է այդ ամենը եւ ոտով-գլխով խրվում քաղաքականության մեջ: Այնպիսի հայտարարություններ էր անում եւ այնպիսի գործունեություն ծավալում, որ շատ վտանգավոր էր յուրաքանչյուր իշխանության համար: Բնականաբար, ոչ մի իշխանություն չէր ցանկանա հանդուրժել նման մարդուն, ում հետեւից գնում էին միլիոնավորներ եւ որի խոսքը կարող է ահռելի բռնկման կայծ դառնալ: Եվ ամբողջ նախագահական ապարատը դուրս եկավ նրա դեմ: Այս պայմաններում սպանության վարկածը, որը Խորհրդային Միությունում ներկայացվեց որպես հոգեպես անհավասարակշիռ անձի երկատվածությամբ տառապող մեկի կողմից կատարված սպանություն, համոզիչ չէր: Եվ ես սկսեցի փորփրել արխիվները եւ պարզել՝ ինչ է եղել իրականում: Ուսումնասիրելով, ես եկա այն համոզման, որ սա քաղաքական մոտիվներով կատարված սպանություն էր: Զուգահեռ անցկացնելով Պրոմեթեւսի հետ՝ որոշեցի գալ հասնել մինչեւ մերօրյա «պրոմեթեւս» Ջոն Լենոնին:

**- Ըստ Ձեզ՝ ո՞վ է ձեր ընթերցողը կամ ինչպիսի՞ն նա պետք է լինի:**

- Հնչել են կարծիքներ, որ գիրքը գուցե ամեն մեկը չհասկանա, քանի որ որոշակի պատրաստվածություն է պահանջում: Նկատի ունեն, որ ընթերցողը պետք է փոքր-ինչ տեղեկացվածություն ունենա ե՛ւ գրականությունից, ե՛ւ երաժշտությունից, ե՛ւ աշխարհի ընթացիկ իրադարձությունների մասին: Սակայն կարծում եմ՝ դա միայն ընթերցողի խնդիրն է, իմ խնդիրը չէ:

**- Շատ է խոսվել գրքի ժանրի մասին, ի վերջո ո՞րն է գործի ժանրը:**

Կան ռեալիզմների տարբեր տեսակներ: Քանի որ խրոնիկաներ են գրքում, մի օր սուրճ խմելիս միտքս եկավ այսպիսի մի բնորոշում՝ խրոնիկական ռեալիզմ, բայց իհարկե լավ իմաստով (ծիծաղում է):

**- Շուրջ 10 տարի գրել եք գիրքը. ո՞րն է նրա հիմնական նպատակը:**

- Գիրքը գրելիս ունեցել եմ մի նպատակ. ցույց տալ այն մարդկանց, որոնք փորձել են ավելի տանելի, ազատ ու գեղեցիկ դարձնել կյանքը եւ արել են հնարավոր ամեն ինչ դրան հասնելու համար՝ զոհաբերելով անգամ իրենց կյանքը: Կուզենայի գիրքս կարդացողները նույնպես փորձեն ավելի լուսավոր դարձնել կյանքը՝ չմոռանալով «պրոմեթեւսներին»:

ՍՈՆԱ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

# Յուրա Մովսիսյան. «Սպարտակը» ՌԴ առաջնության ուժեղագույն թիմն է»

***Օրերս Յուրա Մովսիսյանը պաշտոնապես դարձավ Մոսկվայի «Սպարտակի» ֆուտբոլիստ՝ 4,5 տարվա պայմանագիր կնքելով ակումբի հետ: Մոսկվայում գտնվելիս նա հարցազրույց է տվել «Российская газета»-ի թղթակցին, որը կհետաքրքրի նաեւ «Ազգի» ընթերցողներին:***

**- Յուրա, ինչո՞ւ ես Մոսկվայում մնացել՝ փոխանակ մեկնելու արձակուրդ:**

- Որովհետեւ ընտանիքս բարեկամներիս հետ ժամանել է Մոսկվա: Բացի այդ մի քանի փաստաթղթեր պետք է ստորագրեի՝ կապված «Սպարտակ» տեղափոխվելու հետ: Հասցրեցի նաեւ նոր ակումբակիցներիս հետ ծանոթանալ:

**- Որտե՞ղ ես մտադիր անցկացնելու արձակուրդը:**

- Հինգշաբթի մեկնում եմ Լոս Անջելես: Մոսկվա կվերադառնամ հունվարի կեսերին, որպեսզի թիմի հետ մեկնեմ ուսումնամարզական հավաքի:

**- Շա՞տ ես հոգնել լարված մրցաշրջանից հետո, թե՞ պատրաստ էիր էլի խաղալ:**

- Հոգնածությունը զգալ է տալիս, քանի որ մրցաշրջանում շատ հանդիպումներ եմ անցկացրել ինչպես «Կրասնոդարում», այնպես էլ ՀՀ հավաքականում: Այժմ ժամանակն է հանգստանալու: Ցանկանում եմ ընտանիքիս հետ անցկացնել ժամանակն ու ժամանակավորապես մոռանալ ֆուտբոլի մասին:

**- Վնասվածքդ այլեւս չի՞ անհանգստացնում:**

- Առաջընթաց կա ապաքինման հարցում, սակայն լիովին խնդիրը լուծված չէ: Սակայն գարնանը 100 տոկոսով պատրաստ կլինեմ:

**- Սեպտեմբերին քո գործակալները բանակցում էին «Կրասնոդարի» հետ պայմանագրի ժամկետի երկարաձգման հարցով: Ինչո՞ւ կողմերին չհաջողվեց համաձայնության գալ:**

- Ակումբը չէր կարող ինձ վճարել այն գումարը, որը ցանկանում էի: Բացի այդ էլ ցանկանում էի խաղալ ուժեղ թիմում: Ուստի որոշեցի տեղափոխվել «Սպարտակ»:

**- «Սպարտակն» առաջին անգամ ե՞րբ է քեզանով հետաքրքրվել:**

- Մի քանի ամիս առաջ: Դա չէր կարող ինձ անտարբեր թողնել: Որոշեցի նման հնարավորությունը ձեռքից բաց չթողնել: Հուսով եմ, որ երբեք չեմ զղջա ընտրությանս համար:

**- Առաջին հերթին ո՞ւմ հետ խորհրդակցեցիր հրավեր ստանալուց հետո:**

- Իհարկե հորս հետ: Նա ասաց, որ պետք է տեղափոխվեմ «Սպարտակ», քանի որ այն բարձրակարգ թիմ է, որտեղ ես կկատարելագործվեմ: Արդեն 25 տարեկան եմ ու ժամանակն է լավագույն տարիներն անցկացնել նման ուժեղ թիմում:

**- Քեզ չի՞ անհանգստացնում այն փաստը, որ վերջերս թիմի մարզիչը փոխվել է:**

- Ոչ: Ինձ համար նույնիսկ ավելի լավ է, որ թիմի ղեկը վստահվել է Վալերի Կարպինին, որը շատ էր ցանկանում ինձ տեսնել «Սպարտակում»:

**- Փաստորեն Կարպի՞նն էր քո տեղափոխության կազմակերպիչը:**

- Այո: Չնայած ակումբի սեփականատեր Լեոնիդ Ֆեդունն էլ հետաքրքրված էր ինձանով: Դեր խաղաց նաեւ ակումբի բաժնետերերից Ջիվան Չոլոյանցը: Այդ անձանց շնորհակալ եմ «Սպարտակ» տեղափոխվելու համար:

**- Որքա՞ն արագ հաջողվեց պայմանավորվել «Սպարտակի» հետ:**

- Բանակցությունները երկարատեւ էին: Չեմ ասի, թե ամեն ինչ հեշտ տրվեց, եղան նաեւ դժվարություններ: Բարեբախտաբար, ամեն ինչ բարեհաջող ավարտվեց:

**- «Կրասնոդարը» քեզ թիմում պահելու ոչ մի հնարավորություն չունե՞ր:**

- Սկզբում գուցե ուներ: Սակայն շատ մեծ էր «Սպարտակում» խաղալու իմ ցանկությունը: Շնորհակալ եմ «Կրասնոդարի» նախագահ Սերգեյ Գալիցկուն, որն օգնեց տրանսֆերի կայացմանը: Ջերմ խոսքեր կարող եմ ասել նրա եւ «Կրասնոդարի» հասցեին: Սա կյանք է: Երբեմն հարկ է լինում բաժանվել: Մշտապես շնորհակալ կլինեմ Գալիցկուն, որը սիրում է իր ակումբն ու ֆուտբոլիստներին:

**- Քո գործակալը խոստովանել է, որ դու այլ առաջարկներ եւս ունեիր, մասնավորապես անգլիական «Սթոք Սիթիից» եւ «Էվերտոնից»: Ինչո՞ւ Անգլիա չմեկնեցիր:**

- Այդ մասին այժմ չեմ ուզում խոսել: Կարեւորն այն է, որ «Սպարտակում» եմ, որը հարուստ պատմություն ունի: Ճիշտ է, վերջին տարիներին թիմը մրցանակներ չի նվաճել: Ես այստեղ եմ, որպեսզի իմ գոլերով հաղթանակներ պարգեւեմ «Սպարտակին» եւ օգնեմ մրցանակներ նվաճելու: «Սպարտակը» ՌԴ չեմպիոնի տիտղոսը բոլորից հաճախ նվաճած ակումբն է: Գիտեմ նաեւ, որ ակումբի լեգենդներից է իմ հայրենակից Նիկիտա Սիմոնյանը, որով հպարտանում եմ: Նույնիսկ երբ Լոս Անջելեսում էի բնակվում, դիտում էի «Սպարտակի» խաղերը: Գտնում եմ, որ «Սպարտակը» Ռուսաստանի ուժեղագույն ակումբն է: Ինձ շատ են դուր գալիս թիմի ֆանատները, որոնք մշտապես աջակցում են «Սպարտակին»: Կաշխատեմ նրանց հուսախաբ չանել:



**- Իսկ եթե նրանք քեզ խնդրեն համոզել Հենրիխ Մխիթարյանին տեղափոխվելու «Սպարտակ», դու դա կանե՞ս:**

- Ինչո՞ւ ոչ (ծիծաղում է): Իհարկե, ես նրան խորհուրդ կտամ մտածել այդ հարցի շուրջը: Բայց Հենրիխն էլ բարձրակարգ թիմում է խաղում: Բացի այդ, նա մի շարք առաջարկներ ունի եվրոպական առաջատար ակումբներից: Ամեն դեպքում ընտրությունը Հենրիխինն է:

**- Ի՞նչ գիտես Մոսկվայի մասին:**

- Այն մեծ ու ժամանակակից քաղաք է: Ինձ այստեղ հարմարավետ կզգամ, քանի որ բնակվել եմ Լոս Անջելեսում: Խցանումներն էլ ինձ չեն վախեցնում: Հարկ եղած դեպքում կարող եմ մետրոյից օգտվել:

**- Մեքենադ Կրասնոդարից բերելո՞ւ ես Մոսկվա, թե՞ այստեղ նորը կգնես:**

- Դեռ չեմ որոշել, բայց երեւի Մոսկվայում գնեմ:

**- Մեքենաները քո հոբբի՞ն են:**

- Ոչ: Ավելի շուտ դա թեթեւ զվարճանք է: Սիրում եմ հաճախակի փոխել մեքենաս:

**- Մի շարք ուժեղագույն ֆուտբոլիստներ տեղափոխվելով մոսկովյան ակումբներ, իրենց ֆուտբոլային տաղանդը փչացրել են գիշերային ակումբներում եւ այլ զվարճանքներում: Քեզ դա չի՞ սպառնում:**

- Ոչ, ինձ դա չի հետաքրքրում: Ես պրոֆեսիոնալ եմ եւ երբեք ինձ թույլ չեմ տա հաճախել գիշերային ակումբներ ու մինչեւ առավոտ զվարճանալ: Ինձ համար ամենակարեւորը ֆուտբոլային կարիերաս է: Ավելի հաճույքով եմ ժամանակն անցկացնում կնոջս եւ երեխաներիս հետ, որոնցից երկար ժամանակով ստիպված եմ լինում բաժանվել:

**- Մի քանի խոսք Հայաստանի ազգային հավաքականի մասին: Իրատեսակա՞ն է աշխարհի առաջնության ուղեգրի նվաճումը:**

- Դեռ վաղ է այդ մասին խոսելը, քանի որ ընդամենը 3 խաղ ենք անցկացրել: Մեր խմբում հանդես են գալիս Իտալիան, Չեխիան, Դանիան: Մեր հավաքականը բավական երիտասարդ է: Եթե Բրազիլիա մեկնելու համար հրաշք է հարկավոր, ապա 2016-ի Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգրի նվաճումը իրատեսական եմ համարում:

**- Ինչի՞ շնորհիվ հավաքականին հաջողվեց նման առաջընթացի հասնել:**

- Ոչ մի գաղտնիք չկա: Պարզապես հպարտ ենք, որ խաղադաշտ ենք դուրս գալիս Հայաստանի պատիվը պաշտպանելու եւ ներդնում ենք բոլոր ուժերը, որպեսզի մեր ժողովրդին ուրախացնենք:

**- Կան ֆուտբոլիստներ, որոնց կարծիքով պետք է ֆուտբոլի ֆեդերացիայի հետ բանակցել հավաքականի տոնած հաղթանակների համար պարգեւավճար ստանալու հարցով: Հայաստանում նման բան չկա՞:**

- Մեզ մոտ ոչ ոք այդ մասին չի էլ մտածում: Ֆեդերացիան ամեն ինչ անում է, որպեսզի բոլոր նպաստավոր պայմանները ստեղծի մեզ համար՝ այդ թվում լուծելով պարգեւավճարների հարցը: Սակայն ինչպես նշեցի, մենք խաղում ենք ոչ թե փողի, այլ երկրի պատվի համար:

**- Ինչո՞ւ ընտրեցիր Հայաստանի հավաքականը: Չէ՞ որ կարող էիր հանդես գալ նաեւ ԱՄՆ-ի ընտրանիում:**

- Թեեւ մեծացել եմ Ամերիկայում եւ մեծ սեր ունեմ այդ երկրի հանդեպ, սակայն ես հայ եմ ու մշտապես ցանկացել եմ հանդես գալ Հայաստանի հավաքականում: Դա իմ երազանքն էր:

**- Մարդու մեջ առավել շատ ի՞նչն ես գնահատում:**

- Ազնվությունը, ինչպես նաեւ վախի բացակայությունն ու ձգտումը կատարել այն, ինչ ցանկանում է, այլ ոչ թե հարկադրում են:

**- Երբ եւ որտե՞ղ ես քեզ առավել երջանիկ զգում:**

- Բոլորից շատ ուրախանում եմ, երբ ընտանիքս, երեխաներս ու հարազատներս կողքիս են: Հանուն նրանց եմ ապրում:

**- Ունե՞ս նվիրական երազանք:**

- Իհարկե: Հայաստանի հավաքականի կազմում աշխարհի առաջնությունում այնպես հանդես գալ, որպեսզի մեր երկրի մասին ողջ աշխարհը տեղեկանա:

# Լեւոն Արոնյանը միանձնյա առաջատարն է

**Չինաստանում ընթացող համաշխարհային մտավոր խաղերի շախմատի մրցաշարում երեկ մասնակիցներն անցկացրին «կույր» շախմատի մրցաշարի նախատեսված 7 տուրերից 4-ը: Ի տարբերություն արագ եւ կայծակնային շախմատի մրցաշարերի, Լեւոն Արոնյանը «կույր» շախմատում իրեն առայժմ հիանալի է դրսեւորում: Նա 4 հնարավորից վաստակած 3,5 միավորով միանձնյա գլխավորում է աղյուսակը:**

**Արոնյանը մեկնարկեց Ալեքսանդր Մորոզեւիչի նկատմամբ տոնած հաղթանակով, ապա հաշտություն կնքեց Հիկարու Նակամուրայի հետ: Հաջորդ 2 պարտիաներում Լեւոնը հաղթեց Բայադուր Ջոբավային եւ Շահրիյար Մամեդյարովին:**

**Արոնյանից կեսական միավորով հետ են մնում Դին Լիժենը եւ Պետեր Լեկոն: 2,5-ական միավոր ունեն Վան Հաոն, Շահրիյար Մամեդյարովն ու Թեյմուր Ռաջաբովը:**

**Կանանց մրցաշարում Էլինա Դանիելյանը վաստակել է 2 միավոր: Նա ոչ-ոքի խաղաց Ալեքսանդրա Կոստենյուկի հետ, ապա հաղթեց Անտուանետա Ստեֆանովային: 3-րդ տուրում Էլինան պարտվեց Վիկտորիա Չմիլիտեին, իսկ հաջորդ պարտիայում հաշտություն կնքեց Ժուն Սյուեի հետ:**



**Մրցաշարային աղյուսակը 3,5 միավորով գլխավորում է Վիկտորիա Չմիլիտեն, որից կես միավորով հետ են մնում Համպի Կոներուն եւ Հոու Յիֆանը:**

# Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը հաղթողին զիջեց լրացուցիչ գործակիցներով

**Բրազիլահայ գրոսմայստեր Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը հաջող հանդես եկավ Սանտոսում անցկացված շախմատի շրջանաձեւ մրցաշարում: 9 հնարավորից վաստակելով 7 միավոր, հայ շախմատիստը գրավեց 2-րդ տեղը՝ հաղթողի տիտղոսը լրացուցիչ գործակիցներով զիջելով նույնքիսի արդյունքի հասած Ալեքսանդր Ֆիերին: 3-րդ տեղը զբաղեցրած Դիեգո Ֆլորեսը եւս վաստակեց 7 միավոր:**

**Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը մրցաշարի միակ մասնակիցն էր, որ պարտություն չկրեց: Նա հաղթեց Աուրել Գուլիերմին, Յանիեթ Մարերոյին, Էլբերտ Գալոյին, Ֆաբրիցիո Կամպելոյին եւ Կառլոս Վելինգտոնին: Ալեքսանդր Ֆիերի, Դիեգո Ֆլորեսի եւ Բեռնարդո Ռոսելիի հետ մրցախաղերում գրանցվեցին ոչ-ոքիներ:**

# Նորայր Գրիգորյանը տեղափոխվեց «Արարատ»

**Ֆուտբոլի Հայաստանի առաջնությունում հայտարարված ընդմիջման ժամանակ թիմերը սկսում են համալրման գործընթացը: Երեւանի «Արարատի» ղեկավարությունը որոշել է հրաժարվել մի խումբ ֆուտբոլիստներից ու փոխարենը թիմ հրավիրել ավելի լավ խաղային որակներ ունեցող խաղացողների: «Արարատի» առաջին ձեռքբերումը փորձառու պաշտպան Նորայր Գրիգորյանն է, որը հեռացել էր «Ուլիսից»: Նա 2 տարվա պայմանագիր է կնքել «Արարատի» հետ:**

**«Արարատի» գլխավոր մարզիչ Աբրահամ Խաշմանյանը լավ ծանոթ է Գրիգորյանի խաղային ունակություններին, քանի որ 2011-ին նրա գլխավորությամբ Նորայրը հանդես է եկել Կապանի «Գանձասարում»:**

**Իսկ ահա Կարեն Ավոյանի հետ փոխադարձ համաձայնությամբ պայմանագիրը խզվել է:**

# Կպարգեւատրվեն նաեւ հաշմանդամ մարզիկները

**Տարիներ շարունակ հաշմանդամային սպորտը պատշաճ ուշադրության չի արժանացել պետության կողմից: Միջազգային խոշոր մրցաշարերում հաջողության հասած մարզիկները չեն պարգեւատրվել, ինչպես մյուս մարզիկները: Եվ ահա ՀՀ կառավարությունը վերջապես որոշել է ուղղել իր սխալը:**

**Ինչպես տեղեկացանք ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունից, տարեվերջյան մարզական արդյունքների ամփոփման ժամանակ դրամական պարգեւներով կպարգեւատրվեն նաեւ խուլերի հունահռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի չեմպիոն Սարգիս Սարգսյանը (55 կգ), արծաթե մեդալակիրներ Հովհաննես Հարությունյանը (60 կգ) եւ Նարեկ Նիկողոսյանը (84 կգ):**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Որտե՞ղ թաքցնել «30 հազար հայերին»

Հայ հասարակությունը «նոր էր համակերպվել» ադրբեջանական մեդիամեքենայի այն տեղեկությունների «ճշմարտացիությանը», թե Ադրբեջանում այսօր ապրում են 30 հազար հայեր, երբ նույն այդ մեքենան թարմացրեց տեղեկությունը: Պարզվում է, որ 30 հազար հայեր ապրում են ոչ թե Ադրբեջանի տարածքում, այլ միայն Բաքվում: Ընդ որում՝ նրանք դիմում են համապատասխան վարչությանը՝ տրամադրելու իրենց Ադրբեջանի քաղաքացիություն:

Բայց ամեն ինչ փոքր-ինչ մանրամասնենք: Ադրբեջանական Vesti.az-ը օրերս տեղեկացրեց, թե «Բաքվում ապրող 30 հազար հայերից 30 հոգի դիմել են Ադրբեջանի միգրացիոն ծառայությանը՝ խնդրելով աջակցել՝ ստանալու անձը հաստատող փաստաթուղթ»: Իհարկե Vesti.az-ը չի պարզաբանում, թե ինչո՞ւ Բաքվում «այսօր ապրող 30 հազար հայերից» միայն 30 հոգին են անձը հաստատելու փաստաթուղթ խնդրում Ադրբեջանի միգրացիոն վարչությունից, թերեւս այս հարցն այնքան էլ չկարեւորելով: Շարունակելով՝ ադրբեջանական կայքը մեջբերում է հարեւան երկրի ՆԳՆ անձնագրային վարչության ներկայացուցչի հայտարարությունը. «Ազգությամբ հայ քաղաքացիներին արդեն վաղուց անձը հաստատող փաստաթղթեր են տալիս, եւ սա նորություն չէ: Նրանք Ադրբեջանի նույնպիսի քաղաքացիներ են, ինչպես մնացածը, եւ նրանց մերժելու հիմքեր այժմ մենք չունենք»: Փաստորեն, եթե Ադրբեջանի ՆԳՆ անձնագրային վարչությունն «այժմ ազգությամբ հայ քաղաքացիներին» մերժելու հիմքեր չունի, ստացվում է, որ դրանք ունեցել է ավելի վաղ (եթե, իհարկե, ընդունենք, հարեւան երկրում ազգությամբ հայերի գոյության փաստը - Հ. Ա.), իսկ եթե ավելի վաղ հայերի խնդրանքը մերժվել է, ապա հարց է առաջանում՝ ինչո՞ւ, եւ, որն ավելի կարեւոր է՝ ի՞նչն է այսօր փոխվել, որ «այժմ նրանց մերժելու հիմքեր մենք չունենք»:

Այնուհետեւ սկսվում է ամենաուշագրավը: Համապատասխան պաշտոնյան ադրբեջանական կայքին հավաստիացրել է. «Ազգությամբ հայերը անձը հաստատող փաստաթուղթ ստանալու համար ցանկանում են, որ իրենց ազգանունների «յան» վերջավորությունը փոխվի՝ «ով»-ի, կամ «ովա»-ի. «Դա տրամաբանական է: Կողմերը գտնվում են պատերազմական դրության մեջ, ու թեեւ Ադրբեջանի պաշտոնական դիրքորոշմամբ, անկախ ազգությունից, բոլորը հավասար են օրենքի առջեւ, որոշ մանր պաշտոնյաներ փորձում են երբեմն խնդիրներ ստեղծել: Դա ընդամենը բյուրոկրատական քաշքշուկ է, երբ տեղեկանք չեն տալիս եւ այլն», պարզաբանել է Ադրբեջանի ՆԳՆ ներկայացուցիչը:

Լավ, եթե իրոք հարեւան երկրում հայեր են ապրում՝ «յան» վերջավորությամբ ազգանուններով, ու, ինչպես պաշտոնական Բաքուն է պնդում, պաշտպանված են հանդուրժող ադրբեջանցի հասարակությունում, ապա ինչո՞ւ են նրանք ցանկանում իրենց ազգանունների «յան» վերջավորությունը փոխարինել «ով»-ով կամ «ովա»-ով: Հետեւաբար, կամ հայերն Ադրբեջանում պաշտպանված չեն ու վտանգի մեջ են՝ զուտ եւ միայն իրենց ազգության համար, կամ հարեւան երկրում ընթանում է հայերին ադրբեջանցի սարքելու քաղաքականություն, կամ էլ, ինչն ամենահավանականն է թվում, Ադրբեջանում հայեր ուղղակի չկան, այն էլ՝ 30 հազար: Թերեւս այս առումով տեղին է հիշել Ադրբեջանում լայն ժողովրդականություն վայելող Ռամիլ Սաֆարովի փաստաբանի խոսքերը բուդապեշտյան դատարանում. «Ադրբեջանում հայ սպանելը չի համարվում հանցագործություն»: Գուցե «30 հազարից 30 հայերը» հենց այս սարսափից են ցանկություն հայտնել դառնալ Ադրբեջանի քաղաքացի եւ փոխարինել իրենց ազգանունների «յան» վերջավորությունը...

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Մահացավ ռումինահայ նշանավոր նկարիչ Միկլոշ Յակոբովիչը



Դեկտեմբերի 17-ին Ռումինիայի Օրադեա քաղաքում մահացավ ռումինահայ նշանավոր նկարիչ Միկլոշ Յակոբովիչը: Նկարիչը ծնվել է 1936 թ. օգոստոսի 9-ին Կլուժ-Նապոկա քաղաքում: Տրանսիլվանիայի հին հայերի շառավիղներից էր: Ավարտել է Թըրգու-Մուրեշի, այնուհետեւ Կլուժի գեղարվեստի դպրոցները: Առաջին անհատական ցուցահանդեսը բացել է 1965 թ.: Բազմիցս ցուցադրվել է Ռումինիայում եւ Հունգարիայում, ինչպես նաեւ Գերմանիայում, Իտալիայում, Հոլանդիայում, Լեհաստանում, Սլովակիայում, Շվեյցարիայում եւ Չինաստանում:

Յակոբովիչի ինքնության եւ ստեղծագործությունների մեջ նշանակալի տեղ էին զբաղեցնում հայկական արմատները եւ թեմաները: Նա հատիկ առ հատիկ հավաքում էր Տրանսիլվանիայում առկա հայկական հիշատակները, վերականգնում Գեռլայի (Արմենոպոլիս) եւ Դումբրավենի հայ կաթոլիկ եկեղեցիներում պահպանվող բազմաթիվ արժեքավոր սրբապատկերներ: 1990-ական թվականներին Յակոբովիչն այցելել է Հայաստան, եղել նաեւ Արցախում, որի խրոխտ բնակիչներն ու լեռնային պատկերները խոր տպավորություն են թողել նրա վրա:



Վերջին տարիներին Յակոբովիչը փափագում էր ցուցադրվել Հայաստանում, եւ ՀՀ մշակույթի նախարարության հետ պայմանավորվածություն էր ձեռք բերվել այս տարի հոկտեմբերին նրա անհատական ցուցահանդեսը բացել Երեւանի Ժամանակակից արվեստի թանգարանում, սակայն վրա հասած ծանր հիվանդության պատճառով հետաձգվել էր:

Հայաստանի անկախության 20-ամյակի կապակցությամբ Միկլոշ Յակոբովիչը պարգեւատրվել էր ՀՀ սփյուռքի նախարարության «Արշիլ Գորկի» մեդալով:

# NASA-ի գրավիտացիոն զոնդերը մխրճվել են Լուսնի մակերեւույթի մեջ

Հյուսիսամերիկյան տիեզերական գործակալությունն ավարտել Է Լուսնի ձգողականության հետազոտման առաքելությունը (GRAIL): Առաքելության եզրափակիչ փուլի հաջող ավարտի մասին, որի շրջանակներում բանեցված «Էբբ» եւ «Ֆլոու» տիեզերական ապարատները մխրճվել են Լուսնի մակերեւույթի մեջ, հայտարարել են Փասադենայում (Կալիֆոռնիայի նահանգ) NASA-ի Ռեակտիվ շարժման լաբորատորիայի մասնագետները, հաղորդում Է «Արմենպրեսը»:

Անկման պահին զոնդերի արագությունը կազմել Է վայրկյանում շուրջ 1,7 կիլոմետր:

«Էբբ»-ի եւ «Ֆլու»-ի անկման վայրին շնորհվել Է Սալի Ռայդի՝ ամերիկացի առաջին կին տիեզերագնացի անունը: Ռայդը, որը մահացել Է 2012 թվականի հուլիսին, մասնակցել Է GRAIL ծրագրի աշխատանքին:

«Էբբ»-ը եւ «Ֆլոու»-ն Լուսին էին արձակվել 2011 թվականի սեպտեմբերին՝ նպատակ ունենալով Երկրի արբանյակի ձգողականության դաշտի մանրամասն քարտեզի կազմումը:

# «Արմենպրես» լրատվական գործակալությունն 94 տարեկան է

«Արմենպրես» լրատվական գործակալությունը 94-րդ տարեդարձը տոնում է նշանակալի ձեռքբերումներով: Դեկտեմբերի 18-ն «Արմենպրեսի» հիմնադրման օրն է: 1918 թ. Հայաստանի Ազգային խորհրդի հենց այդ օրվա նիստի արձանագրությունում ազդարարվեց Հայաստանի նորանկախ պետության համար մեծ իրադարձություն հանդիսացող Հայաստանի հեռագրական գործակալության ծնունդը:

Վերջինիս հիմնման վերաբերյալ առաջին օրենքի ընդունմամբ երկրի բոլոր պետական ու հասարակական հիմնարկները պարտավորվել են տեղեկություններ տալ գործակալությանը, ընդ որում՝ արգելվել է նախքան դրանք գործակալությանը հաղորդելը տալ մասնավոր անձանց կամ հաստատություններին, ինչպես նաեւ գործակալության հեռագրերի արտատպումն այլ հրատարակություններում՝ բաժանորդ թերթերում դրանց հրապարակումից հետո 48 ժամվա ընթացքում: Հայհեռագործի առաջին պաշտոնական հեռագրային ժապավենը, ինչպես եւ նախօրոք ծանուցվել է բաժանորդներին, թողարկվել է 1919 թ. հունվարի 15-ին. այն ընդգրկել է 22 կարճ լուր: Դրանք ուշագրավ տեղեկություններ են հանրապետության առօրյայի, պետական շինարարության, ազգամիջյան փոխհարաբերություններում գլուխ բարձրացնող ներքին խժդժությունների մասին:

Հայհեռագործն իր գոյության ավելի քան ինը տասնամյակների ընթացքում ունեցել է երեսունից ավելի ղեկավարներ: «Հայհեռագործ-Արմենտագ-Արմենպրես»-ը մշտապես արտահայտել է հասարակության ցավերն ու մտահոգությունները. նա ժողովրդի հետ պայքարել է ֆաշիզմի դեմ, ուրախությամբ արձանագրել հետպատերազմյան շրջանում հայորդիների ներգաղթը, անմասն չի մնացել մշակութային կյանքում տեղի ունեցող իրադարձություններից եւս: 1959-ի դեկտեմբերից գործակալությունն ունենում է նաեւ իր առանձին, մասնագիտացված ֆոտոծառայությունը՝ «Ֆոտոխրոնիկա-ՀՀԳ» անվամբ, որ կարճ ժամանակում մեծ համբավ է ձեռք բերում: Հետագայում որոշվել է փոխել հնաբույր Հայաստանի հեռագրական գործակալություն անվանումը: Հայտարարվում է անվանափոխման մրցույթ: Ներկայացված ամենատարբեր առաջարկություններից ընտրվել է «Արմենպրեսը»:

ՀՀ կառավարության կողմից 1998 թ. հունվարի 22-ին հաստատվել է «Արմենպրեսի» նոր կարգավիճակը՝ պետական բաժնետիրական ընկերություն, որի բաժնետոմսերը տնօրինում է ՀՀ պետությունը: Գործակալության ամենօրյա լրատվությունը պատրաստվում է հայերեն, անգլերեն, ռուսերեն: Այն ունի հարուստ տեղեկատվական եւ լուսանկարչական արխիվ, որը Հայաստանի եւ տարածաշրջանի յուրահատուկ պատմությունն է ներկայացնում:

«Արմենպրեսն» ունի բազմաթիվ բաժանորդներ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում. զանգվածային լրատվության միջոցներից զատ դրանց թվում են դեսպանատներ, միջազգային կազմակերպություններ, բանկեր, ֆինանսական կառույցներ, վերլուծական կենտրոններ, ինստիտուտներ: Արմենպրեսի համագործակից գործակալությունների թվում են տեղեկատվական դաշտի այնպիսի առաջատարներ, ինչպիսիք են «ԻՏԱՌ-ՏԱՍՍ»-ը, «Ռոյթերը», «Սինխուան», որոնց հետ իրականացվում է տեղեկությունների փոխանակում:

*Արմենպրես*

# Գյումրեցի գեղանկարիչ Սամվել Գալստյան. «Իմ աշխատանքները ավելի շատ գողացել են, քան ես վաճառել եմ»

**Գյումրու ծայրամասերից մեկում՝ Սավոյան անանցանելի փողոցի եւ նախկին պոլիտեխնիկական ինստիտուտի փլատակների հարեւանությամբ գտնվող տնակային ավանում է ապրում ու ստեղծագործում գեղանկարիչ Սամվել Գալստյանը: Նա ներկայումս Գյումրու Մերկուրովի անվան նկարչական դպրոցի տնօրենն է:**

**Ի դեպ, ժամանակավոր եւ մի խղճուկ տարածքում է պատսպարված նաեւ իննսուն տարվա պատմություն ունեցող նկարչական դպրոցը: Եվ դա այն դեպքում, երբ քաղաքի կենտրոնում գտնվող դպրոցի նախկին, պատմաճարտարապետական շքեղ կոթող համարվող շենքը կանգուն է: Պարզապես երբեմնի «Կումայրի» արգելոցի զարդը հանդիսացող նմանատիպ այլ շենք-շինությունների նման... վաճառված է: Գյումրիում շրջանառվող խոսակցությունների համաձայն, այդ շենքը եւս գնվել է Գյումրու նախկին քաղաքապետի ընտանիքի կողմից:**

**Առաջ անցնելով ասենք, որ փոքրիկ վագոն-տնակում ապրող եւ ստեղծագործող նկարիչ Սամվել Գալստյանը գյումրեցի տաղանդավոր այն հատուկենտ նկարիչներից է, որոնք երկրաշարժից հետո չեն լքել քաղաքը: Նրա հատկապես ջրաներկով աշխատանքները մեծ մասամբ գնում են Հայաստանում օտար երկրների դիվանագիտական կորպուսի աշխատակիցները: Մեզ հետ ունեցած զրույցում գեղանկարիչը պատմեց, որ իր նկարները տարբերաբար նաեւ գողացել են:**

**«Շիրակ կենտրոնի» տեսանյութում Սամվել Գալստյանը պատմում է իր ստեղծագործական ուղին, իր խոհերն է հայտնում Գյումրիում արվեստի եւ արվեստագետների հանդեպ իշխանությունների ու հասարակության ունեցած ներկայիս վերաբերմունքի մասին:**

**http://youtu.be/0Gu5cpK4awE**




ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 18.12.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: